

ՀՐԱՅ. ՅԱԿՈՅ Մ. ՍՐԱՋԵԱՆ Գրայան Բժի 3

ՊՕԶ.ՊՈՒ ՓԻՐԱԼԵԱՆՆ

ՅՈՐ ԽՈՃԱՐԱՀ


ԱՇ ԵՐ ԱՌ Անձնաւու և նաւոկաւու
լու բարեկառ ու շատութեամբ ենթէ վաչ-
ան, ու Խոճար Խոճար անհասանութեան
պատ և հետ ու սենան ուս քանկարին և ան-
գուզնիան զիւելն:

ՀԱՐԴՈՒԱՅ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆ ԱՐԱՐԱԿԱՆ

(Ցաղը Մ. Առաջին)

1914



ՊՈՂՈՍ ԳԻՐԱՆԵԱՆ

ԵՐԵ ԽՈՀԱՐԱՐ



ՄԱՐԶՈՒԱՆ
ՏՊԱԳՐ. ԱՆԱԹՈԼԻԱ
(Յակոբ Մ. Մրապեան)

1914



ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՍԸ

Դիրք մը պարզ առաջնորդ մըն է միշտ: Հնրեցողը
պէս է անր մէջ իր միտքը դնէ եւ իր անձնական կուրո-
դուրիւնները զործածէ, որպէսզի մեռեալ տառերը կեանին,
իրողորեան հասնին: Կերակուրներ պատրաստելու առաջ-
նորդող գրոյն մը գրած ատենին այս պարագան մաս-
նաւորաբար կը յիշենի, վասնզի համոզուած ենի որ եթէ
կերակուրներ պատրաստող ինի աղ կերակուրներուն նիս, եւ
անոնց պէս չեփի, կերակուրը թերի կը մնայ: Լաւ պար-
տէկ մը իր ժիրոց շունչէն կ'ունճանայ: Կերակուրն աղ իր
բոյրն ու համը զայն պատրաստողին անձէն կ'առնէ: Մա-
տուր եւ ճաշակաւոր կերակուրներ պատրաստելու համար
մաքրութիւն եւ ճաշակ պէս է: Մէկ խօսքով՝ կերակուր-
ները պէս է ուղեղով եփել — խոհարարին ուղեղովը: Այն
ատենի կերակուրներու պատրաստորիւնը նոր յաջողութիւն-
ներու, նոր զիտերու անհանում աղբիւր մը, զրոսանի
մըն է ինմինին: Բաւ է անզամ մը հասկնալ կերակուրներ-
ուն մը խնի պարզ սկզբունքները եւ կարելիութիւնները:
Մենի այս գրոյնով այդիսն մը եթէ տանի, մնացածը կը
բողունի պատրաստողին արքանամուրեան. որ դիտէ, պա-
րագաներուն համեմատ կառավարէ կերակուրներու յափիր,
ժեւողութիւնը ու ուրիշ նրբութիւններ: Ասով կարելի է
խոհարարութիւնը արևեստի սահմաններին աւելի բարձրա-
ցնել եւ արուեստներու, «հիւներ»ներու, «մարիֆեր» ներու
կարգն անցնել: ՈՒԶԵԼ եւ ԶԱՆԱԼ, երբ այս երկուիցը կը
դնենի կերակուրներուն մէջ, անոնի ինմինին եւ դիւրաւ կ'ե-
փին:

Բնաւ չզիցողին համար իսկ այս գրտոյկին առաջնորդութիւնով, կարճ ժամանակ մը բարական պիտի ըլլայ կերակուրենու ընդհանուր պահանջմանը ըմբռնել: Անկէ յետոյ փորձով բնաւ դժուարութիւն չպիտի զգայ կերակուրեն պատրասելու մէջ, երբ խղճմօրքն կը հետեւի մեր բացարութիւններուն, միշտ պահանձերը լիցնելով իր իսկ ճաշակին եւ դիտողութեամ գործածութիւնով:

Մեր գրտոյկը պարզ եւ յատկ ընել ցանցած ենք, որպեսզի ամեն դասակարգի ամեն կարենայ անոր մօտենալ եւ ամենի օգտուիլ: Չաս անզամ նոր տուն կազմոյ հարսկը հակառակ իրենց ամենագեղեցիկ բաղձանիմ՝ չեն զիտեր քեզ ուրիշ սկսելու եւ ուր վերցանելու են: Բազմաթիւ երիտասարդներ եւ երիտասարդուհիներ հիմա սիստուած են օսար հորիզոններու տակ առանձին ապրիլ եւ ինչզինքնին յունամեկ: Անոնց գործերը, շաս անզամ անակնկացներով լիցնուն: Իրենց ժամանակը կը ասինանափակեն եւ կարճ ատենի մը մէջ եւ իրենց ժամանակի տարութենին վեր ցծանրաբեռնող համենի կերակուր մը ուտել կ'ուզեն: Ասոնց կը յանձնարարենք որ վիխանակ ուրիշ տեղեր, շաս մը կասկածեի աղտեղութիւններու ենրակայութեամ մէջ սույ զինով ճաշելու. ֆիզ մը նախաձեռնութիւն, գործունեկութիւն ցոյց տան, դիմելով մեր գրտոյկին ետեւի ցանկին. իրենց ախորդակին հետ բող խորհրդակցին ընտրողութեամ մասին: Հոն իշրաբանյիւր կերակուրի եվելու տեսողութիւնը եւ անոնց զիներու միջակ չափ մը դրուած են:

Մարզուանի ամերիկեան Անարդիա գողենին մէջ 18 տարիներէ ի վեր խոհարարութիւն ըրած ըլլալով չէ քեմիայն փորձով գտած ենք աման եւ համեղ ընելու միջոցները, այդ խորհած ենք ուրիշ գողեններու կամ մեծ հացելույթներու աշ օգտակար ըլլայ առհասարակ կերակուրի մեծայանակ չափերն աշ աւելցնելով, որոնցմէ հաջիով ուզուած թիւին կը յարմարցուի:

Բայց ասոնցմէ ամենէն աւելի ուշագրաւ է տեսնել որ
օրէ օր իգական սեղի դաստիարակութեան կարեւորութիւնը
հասկցուելով ամեն տեղ ձեռնարկեւր կ'ըլլան, բայց դրժ-
բախտաբար շատ անգամ անոնց դպրոցի ծրագիրը տղոցինեն
չի տարբերիր, այսինքն աշճակրա, տուարակարութիւն, ժե-
րականութիւն եւլն, միայն կ'ուսուցուին: Եթէ զեզուներ,
երաժշտութիւն, ձեւագիտութիւն եւլն. ալ կայ, չեմ կարծեր
որ Տնտեսագիտական, կերակուրներ եփելու, տուն մը բաւ-
կողիիկ կառավարելու համար նիւթին ուղղակի մօսեցող
դասախոսութիւններ շատ կան: Պէտք է կանուխն սորվեցնել
անոնց ամեն ինչ որ ապագային իրենց պարտականութեան
մասերը պիտի կազմեն: Առողջապահութիւն եւ Տնտեսագի-
տութիւն առնեցնե կարւութեան են. և կերարուներ եփելը
կարծենիք թէ երկուին նետն ալ առնցութիւն ունի դրապես:

Մեր զբոյիլը անկեղծ նախախորձ մըն է օճանակե-
ցու այս բողոքին: Կը մնայ ընթեցողներուն վճռել թէ ան-
որդին կը յաջողի:

23 Յուլիս, 1914,

ՊՕՂՈՍ ՓԻՐԱՆԵԱՆ

Անարթիա, Գոլեն


Վարզուան:

ՄԵՂԱՆԻ ՎՐԱՅ ԿԵՐԱԿՈՒՐԻ ԿԱՐԳԸ

- 1.— ԱՊՈՒԽԾ
- 2.— ՄՍԵՂԵՆ
- 3.— ԿՈԽԱՅՐՈՒՆԵՐ (ՊԱՍՏԵՐ)
- 4.— ՓԻԼԱՒ, ՄԱՔԱՐՈՒՆԻԱ
- 5.— ԽՄՈՐԵՂԵՆՆԵՐ, ԱՆՈՒՇԵՂԵՆՆԵՐ
- 6.— ՊՏՈՒՂՆԵՐ

ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

Ա. ՄԱՍ



Ա. ՄԱՍ

Ա. ԱՊՈՒՐՆԵՐ

1. ՄԻՍԻ ԶՈՒԲԻ, (թիւրիթ, եթ առյու) .— Միսի ջուր
պատրաստելու համար կարելի է գործածել կովի, ոչխա-
րի կամ հաւեղիններու միսը : Աատնցմէ առաջինը ամենէն
զօրաւորն է, իսկ վերջինը հիւանդներու նպաստաւոր:
Վկովի ոսկորը (կէրտան) ամենալաւն է, ինչպէս նաև
ողնայարը (էյէկիւ) : Բնաւ միս չունեցող ծուծով ոսկոր-
ներն ալ պէտք է դնել: Կարմրած միսին ջուրը ամենէն
համելն է թերեւս: Ոեւէ ատեն երբ միս ունենաս, ա-
նոր զանազան մասերը զանազան նպաստակներու յատկա-
ցուր և ոսկորները միսի ջուրի գործածէ:

2. ՄԻՍԻ ԶՈՒԲՈՎԼ ԲՐԻՆՉ Ա.ՊՈՒԲԻ .— Վերի ձե-
ւով միսի ջուր պատրաստելէդ վերջ անոր վրայ, եթէ
պէտք է, ջուր կ'աւելցնես, յետոյ եփ ելելէ վերջ անոր
չ/շն չափ մաքրուած և երեք անգամ լուացուած բրինձ
լեցնելով 3/4 ժամ կ'եփիս: Անկէ վերջ ալիւրով խիւս կ'ե-
փիս, այսինքն քիչ մը այրած իւզի մէջ դգալ մը ալիւր
կը խառնես, կը կարմրցնես, վրան տոմաթեսի ջուր կ'ա-
ւելցնես, լաւ մը կը խառնես որ կոշտեր չմնան, կը հա-
մեմես պղպեղով և կերակուրի ջուրին մէջ մը լեցնես:
Ասկի վերջ մէկ քառորդ եւս եփելը կը բաւէ:

300 հոգիի 4 օխա բրինձ պէտք է :

3. Թէ՛ՐՊԻՑԵԼԻ Ա.ՊՈՒԽԾ .— Թեթիւ կամ լաւ միսի ջուրի մէջ ըրինձը մէկ ժամ եփելու է վերի չափերով : Գաւաթիթի մը մէջ հաւկիթ մը կոտրելով 10 բոսէ լոււ մը ծիծելու է , վրան քիչ մը ալիւր աւելցնելով լաւ մը տրուրելու է : Կերակուրք վար առնելէ 10 բոսէ վերջ այս խիսը կերակուրի ջուրով քիչ քիչ ատաքցնելով մէջը անցընելու է՝ միշտ զգուշանալով որ թէրպիկն չկարի : Վրան լևմոնով (կիտրոն) կամ լիմոնի աղով չափաւոր թթու մը տալու է :

4. Ա.ԲԲԱՆ, ԹէԼ, ԵԲԼՏԲԶ ՇԵՀՐԻՑԵ և ՄԱ.ԲԱՐՆԱ. Ա.ՊՈՒԽԾ .— Այս խմորեղիններէն ու է մէկը տռատ և հի ջուրի մէջ 10 վայրկեանի չափ եռացնելու . քամելու և քամոցին մէջ պաղպահելու է լաւ մը : Յետոյ $\frac{1}{4}$ ժամ միսի ջուրի մէջ դնելով եփելու է : Վար առնելէ 10 վարկեան վերջ վերի ձեւով թէրպիցէն տալու է :

300 հոգիի 3 $\frac{1}{2}$ օխան կը բաւէ :

5. Ա.ՊՈՎՈՎ. Ա.ՊՈՒԽԾ .— Քաշուած սսով կ'առնենք, թէեւ չքաշուածն ալ կ'ըլլայ . և $\frac{1}{8}$ համեմատութիւնով կը դնենք եփած ջուրի մէջ . կէս ժամ եփելէ վերջ նոյնքան ալ քաշուած եռամա կը լեցնենք մինչեւ որ $1\frac{1}{2}$ ժամ եփի . միշտ խառնելու է որ տակը չայրի : Քիչ մը տոմաթէսի ջուր և քիչ մը իւզով սոխրած կը լեցնենք :

300 հոգիի 3 $\frac{1}{2}$ օխա սսով և 3 $\frac{1}{2}$ օխա եարմա կը բաւէ :

6. ԴՄՒՐԶՈՎ. Ա.ՊՈՒԽԾ .— Մէկ օխա մսի ջուր եռացած առեն 50 արամի չափ զըստվ (ալիւրի խիւսը) զաւաթ մը ջուրով հարել և եռացած մսի ջուրին վրայ լեցնել լաւ մը խառնել որպէսզի մէջը կոշտեր չմնան , վրան աւելցնել քիչ մը աղ և մէկ զգալ տոմաթէսի էզմէ . $\frac{3}{4}$ ժամ եփելէ վերջ վար առնել :

7. ՀԱՅ, ԵՂ, ԵՒ ԼՈՒԽ . (զերմանական ապուր) .— Մէկ նկանուկ հաց , 3 կամ 4 լոլիկ , 25 արամ արդար եղ կամ մէկ օխա մսի ջուրով մէկ ժամ ամէնքը մէկտեղ

եփել, յետոյ քիչ մը պաղելէ վերջ ալիւրմաղէն քամել և քիչ մը աղ լեցնելով քիչ կրակի վրայ պահել:

8. ԸՆԴԵՊԷՆՈՎ (զարգաւաբ) Ա.ՊՈՒԻՐ.— Միսի ջուրին մէջ մանրած կաղամբ (շահանայ), քիչ մը մանրած ոսեպղին (հաւուճ), Սամիթ (թէրէվլիւդ), մաղտանոս, և տոմաթէս լեցնելու է: Յետոյ քիչ մը ալիւրի հետ իւղի մէջ մեռցուած սոխ լեցնելու է և մէկ ժամ եփելէ վերջ շատ քիչ մաս մըն ալ բրինձ և մէկ թէյի գգատ շաքար դիր և թող $\frac{3}{4}$ ժամ.առ եփի: Յետոյ շատ բարակ մանրուած բաթաթէսը 10-15 րոպէ խաչէ և մէջը լեցուր ու քառորդ ժամ ալ թող եփի: Կտոր հացերու կրակի վրայ կամ փուռը կարմրած մանր կաորները իւղի մէջ կարմրցուր և վար առնելէ 10 րոպէ ասած կերակուրին վրայ աւելցուր: Զգուշանալու է որ թանձր զանգուած մը չըլլայ և բուսեղէններու ամէն տեսակէն ալ հաւասար քանիակութիւնով դանուի:

Իւրաքանչիւրէն 2 օխա կամ աւելին կը բաւէ 300 հոգիի համար:

9. ՔԻՒԹԹԷՌՎ Ա.ՊՈՒԻՐ.— Միսը քաշէ, կամ ծեծէ աղ և պղպեղ ցանէ, լաւ մը թրէ, սիսենի չափ մանր գնտիկներ շինէ և այլւրի վրայ զլորէ յետոյ մսի ջուրի վրայ ձգէ, կէս ժամ եփելէ վերջ քիչ մըն ալ բրինձ լըւալով վրան լեցուր և թող որ եփի: Վրան տոմաթէս աւելցուր:

300 հոգիի 4 օխա միս և 2 օխա բրինձ կը բաւէ:

10. ԿԱԹՆԱՊՈՒԻՐ.— 60 տրամ բրինձ մաքրէ, լուա, յետոյ $1\frac{1}{2}$ քաշ եռացած կաթ և 50 տրամ ալ շաքար աւելցուր և $1\frac{1}{2}$ ժամ ալ եփէ:

300 հոգիի 4 օխա բրինձ կը բաւէ:

11. ԱԼԻՒՐՈՎ Ա.ՊՈՒԻՐ.— 20 տրամ ալիւրը $1\frac{1}{2}$ քաշ (օխա) պաղ կաթի մէջ անցուր զգուշութիւնով որ կոչտ չըլլայ, և խառնելով կամաց կամաց եփ հանէ,

ուղուած չափով ալ չաքար դիր , կարճ միջոցի մը մէջ
պատրաստ կ'ըլլայ :

11. ՄԱԼԵԶ ԱՊՈՒԻՐ .— 50 տրամ ալիւր 25 տրամ
արդար խւզով բանթէ , մինչեւ որ հառը ելլէ , $1\frac{1}{2}$ քաշ
առաք ջուր քիչ քիչ խառնէ որ կօշտ չըլլայ , և 15 բողէ
ելլէ :

12. ԱԼԻԻՐՈՎ ԲՐԻՆՉ ԱՊՈՒԻՐ .— Պարզ կամ միսի
ջրով բրինձը կէս ժամ եփելէ վերջ քիչ մը ալիւր և անոր
կէսին չափ իւզ կարմրցուր և վրան անցուր . քիչ մըն ալ
պանիրի մանրուք աւելցուր և 30 բողէ ալ եփէ :

13. ԹԱՐԽԱՆԱՅԻ ԱՊՈՒԻՐ .— Թարխանան իրիկուր-
նէ թրջէ . միւս օրը պարզ կամ միսի ջրով խառնելով
կամաց կամաց եփ հանէ : Քիչ մը իւզի մէջ կարմրած սոխ
և աննուխ աւելցուր կէս ժամ վերջը և քիչ մըն ալ եփէ :

14. ԻՇԿԵՄՊՈՒՅ .— Իշկեմպէն պազ ջուրով լաւ մը
լուա' , յետոյ եփ ջուրը ձգէ կտոր կտոր , և հանելով տախ-
տակի մը վրայ դիր և դանակով մը քերելով մէջի սեւ
կողմը լաւ մը մաքրէ . երբ չելի՞ր , կըկին եփ ջուրը ձգէ ,
քերէ . մինչեւ որ ներմակ մաշկը միայ . դուրսի բարակ
խաւն ալ հանէ , լուա' , և կիր ջուրին մէջ ձգէ . յետոյ
պազ ջուրով կրկին լաւ մը լուա' և փոքր քառակուսի-
ներով մանթէ : Քանի մը պճեզ սխառը լեցնելով ապուրի
չափով ջուր աւելցուր և իրիկուրնէ փուռը քչէ : Միւս
օր մէկ հաւկիթ և մէկ դգալ ալիւր իրար խառնէ և լաւ
մը զարկ , յետոյ քիչ քիչ կերակուրին ջուրէն աւելցնելով
նոսրացուր և մինչեւ կերակուրին չափ տաքնալը ջուրը
աւելցուր , յետոյ կերակուրին խառնէ , վրան քացախ լե-
ցուր :

Բ. ԿՈԽԱԾՈՆԵՐ (ՊԱՍՏԸՆԵԲ)

Կոխածոներու բոլորին միսը նոյն կերպով կը պատրաստուի, ուստի դիւրուբեան համար առաջ այդ սորվելու է: Յարմար է որ սրութեաներու եւ ողնայարի ոսկորները հանուին միսի ջուրի կամ ուրիշ նպատակի համար, միայն կուլի ոսկորները կրնան գործածուիլ մանր մանր ջարդելով: Միսը մանր բառակուսիներու (դուռ պատի) վերածէ, աղ եւ հչիկ մը ջուր լեցնելով եփէ մինչեւ որ խւզը բող տայ: Վրան իիշ մը մանրած սոխ, կարմիր պղղուեղ եւ տոմարես դիր ու իիշ մըն ալ եփէ: Նաև կարմրցնելու չէ որ միսը քէ՛ համեղ եւ քէ փափուկ մնայ: Կը մնայ բուսեղենները աւելցնել:

15. ԿԱՆԱԶ ԼՈՒԲԻՍ. (Փատուիան) .— Թասուլիան մաքրէ՛, մէջտեղէն ձեղքէ կամ կոտրելով մանրէ և վերի ձեւով պատրաստուած միսին վրայ դնելով թօթուէ, խառնէ՛, քիչ մը վերջ վրան ջուր աւելցուր և եփէ երկու ժամու չափ: Որքան քիչ կրտկի վրայ կումաց կամաց եփի այնքան համեղ կ'ըլլայ: Վար առնելէ 15 բազէ առաջ տոմաթէս լեցուր, եթէ առաջուց միսին հետ գրուած չէր:

300. Հոգիի համար $3\frac{1}{2}$ լիսրը կը բառէ:

16. ՓԱԹԱԹԻՍ. — Վերինին նման կ'ըլլայ: Մաքրէ՛, մանրէ՛, լոււ, միսին վրայ ջուր լեցուր, մէկ ժամ եփէ, և փաթաթէսը լեցուր:

17. ԱՅԼԵՒԱՅԼՔ (Քիւրիս պատր).— Պատրաստուած միսին վրայ աւելցուր կանաչ լուրիա (Պատրուիա, յետոյ ջրով $\frac{1}{2}$ ժամ եփէ, $\frac{1}{4}$ ժամ վերջ կանաչ պղղուեղ, քիչ մը սմբուկ (պատրածան), ձերմակ զգում, ձերմակ տաեղղին (հաւիճ) աւելցուր: Ասկէ $\frac{1}{4}$ ժամ վերջ ալ սամիթ (թերէվիզ) դիր և տակէ ալ ժամ վերջ քիչ մը պատրա լեցուր, տոմաթէս աւելցուր և 1 ժամ եփէ :

Զգուշանալու է որ ընդեղէններուն ամէն ահսակներն ալ հաւասար և համեմատական ըլլան։ Զուրը շատ քիչ ըլլալու է և կամաց կրակի վրայ եփելու է։

300 հոգիի համար մէկ լիտր լուրիս, 60 պատլըճան, 1 օխա պամիս, 1 օխա հաւիճ, 25—30 առմացու դդում կը բաւէ։

18. ԴԴՈՒՄ. (զապազ). — Վերի բացատրուած ձեւով միաը պատրաստելէդ վերջ թարմ կամ եփած առմաթէս լեցո՛ւր, քիչ մը եփելէ վերջ ջուր լեցո՛ւր և միաը կէս ժամ եփէ. Դդումը (սագըզ գապաղը) մաքրէ և մանրելէ վերջ միսին վրայ աւելցուր և շատ կամաց եփէ մինչեւ $1\frac{1}{2}$ ժամ։

19. ՊԲԱՄ. (իրասա). — Վերինին նման կը պատրաստուի, միայն պրասը մանրելէ վերջ պէտք է 45 րոպէ խաշուի քիչ մը ազով առատ ջուրի մէջ. քամուի, պտղջրուի, և վերջը միսին վրայ դրուելով 45 րոպէ եւս եփի։ Անհրաժեշտ կիտրոն (լիմոն) կամ կիտրոնի ազ պէտք է լեցուի։

300 հոգիի համար 8 լիտր պրասը կը բաւէ։

20. ԹԱՐՄ ՊԱՄԻՍ. — Միուր թիւ 17ին նման կը պատրաստուի, միայն միուր ունենալու չէ։ Կոթերը մաքրելու և եթէ խաշոր են կարելու և միսին վրայ լեցընելու է։ Մաս մը կիտրոնի կամ կիտրոնի ազի ջուր լեցընելու է որ չի չողուի և կամաց կամաց եփելու է $3\frac{1}{4}$ ժամ։ 300 հոգիի համար $3\frac{1}{2}$ լիտր թարմ, 3 օխա չորը կը բաւէ։

21. ՍՈՒ. — Կօխածոներու յատուկ ձեւով երբ միուր կը կարմրի և սոխ լեցնելու ատենը կուգայ. պէտք է շատ մանր սոխերը մաքրել և ամրող միսին իւղովը լաւ մը մեռցնել։ Վրան առմաթէս կամ աղցան կ'աւելցուի և շատ քիչ ջուր լեցնելէ վերջ կրակին մէկ եղերքը շատ կամաց կ'եփի մինչեւ երկու ժամ։ Եթէ ուղուի, կիտրոնի թթու աւելցնել շատ լաւ կ'ըլլայ։

300 հոգիի վեց լիար սոխ կը բաւէ :

22. ՏՈՄԱԹԵՍ. — Ուրիշ կոխածոներու բաղդատամամբ $1\frac{1}{2}$ -2 անգամը բլլազու է միաը : Երբ միաը կը կարմըրի, քիչ մը սոխ մեռցնելէ վերջ շատ քիչ ջուր աւելցնելով $\frac{1}{2}$ ժամ կ'եփի : Յետոյ կարմիր առմաթէսը ջարդելով կը լեցուի և $\frac{1}{2}$ ժամ ես կ'եփի :

300 հոգիի համար վեց լիար կը բաւէ :

23. ՄԵՐԿԵՒԻԼ. (Հայ՝ և Ղաղիկսի) . — Մերկեւիլի միջուկը մաքրելէ վերջ ջարդէ և իւղի մէջ կարմրցուր : Կախածոներու յատուկ ձեւով պատրաստուած միախն վրայ ջուր լեցո՛ւր և մէկ ժամ եփէ : Յետոյ սերկեւիլը լեցո՛ւր, պղպեղ բնաւ մի՛ գնիեր, քիչ մը չաքար աւելցուր և քիչ մը եփէ :

Առանց նախապէս իւղով կարմրելու ալ կ'ըլլայ, և այն ատեն մէկ ժամ եփելու է շատ կամաց կրակի վրայ :

24. ՄԻՍԵՌ (Նոխուտ Պատը). — Իրիկուրնէ՝ մատը չայրելու չափ ատք մոխիր ջուր և դգաղ մը ազ առնելով սիսեռը մէջը լեցնելու և երկու ձեռքով լաւ մը չփելու, ճմռելու և մինչեւ մրւս առաւօտ թողելու է : Յետոյ քամելու և առանց լու ալու՝ եփ ջուրի մէջ լեցնելու է : Զուրը ա՛յնքան առաստ բլլազու է որ բնաւ նոր ջու լեցնել պէտք չըլլայ, քանզի սիսեռը իր չոփին 3-4 անգամը կ'ածի և եթէ եփը կարես, ա՛լ չեփիր : Լաւ է որ պէտք եղածէն շատ աւելի լեցնես կամ կրկին եփ ջուր լեցնես, եթէ անհրաժեշտ պէտք եղաւ : Երկու ժամ եփելու է :

Կոխածոյի յատուկ պատրաստուած միախն վրայ ջուր աւելցնելով կէս ժամ եփելու է : Եփած սիսեռը եփ եփ քամելով իր տաքովի եփող միան վրայ լեցնելու է : Մինչեւ որ սիսեռը կատարեալ մը եփի՛ կամաց կրակի վրայ գթզթացնելու է : 300 հոգիի համար 9 օխտ նախուտ :

25. ԶՈՐ ՃԵՐՄԱԿ ԼՈՒԲԻՍ. (Թատուղիա) . — Լուրիան իրիկուրնէ թրջելու է գաղջ ջրով : Առաւօտն քսմելով

և եփած ջուրի մէջ լիցնելով եփելու է մինչեւ որ միսը պատրաստուի : Երբոր միսը պատրաստուի և սոխն ու առմաթէսը լիցուի , լուրիան քամէ և ուրիշ եփ ջրով միսին վրայ լիցո՞ւր , և երկու ժամ գթզիւցուր կամաց կրակի վրայ :

10 օխա լուրիան կը բաւէ 300 հոգիին համար :

26. ԶՈՐ ՊԱՄԻԱ. — 180 արամ չոր պամիան մաղի մը մէջ դիր և անձեռոցով կամ լաթով . լաւ մը մաղին յատակին շփէ . մինչեւ որ վրայի մազերը թափին : Յետոյ 3-4 օխա եփ ջուրի մէջ թրջոց դիր $\frac{3}{4}$ -1 ժամ : Այդ ատեն միսը կարմրցո՞ւր , առատ օփառվ և ջրով կէս ժամ ալ եփէ , լեմոնի թթու աւելցո՞ւր և պամիան կապերէն հանելով վրան դիր և $\frac{3}{4}$ ժամ ալ եփէ : Ուտելու ատեն մաս մը թթու ևս աւելցո՞ւր :

Պամիան թրջելէ վերջ քիչ մը իւղով կամրցնել և յետոյ միսին վրայ ձգելը երկու օգաւա ունի , թէ՛ համեղ կ'ընէ և թէ՛ չի չողոտիր : Զի չողոտելու համար թթուն ալ միշտ պէտք է քիչ չրայ :

27. ԶՈՐ ԼՈՒԲԻԱ. (Պեղյիւնէ) . — Զորցած , կանանչ լուրիա առատ ջուրով $1-1\frac{1}{2}$ ժամ եռացո՞ւր : Նոյն ատեն միսը պատրաստէ : Յետոյ լուրիան քամէ , լաւ մը պազջրէ , և միսին վրայ դնելով 2 ժամու չափ կամաց կրակի վրայ գթզիւցուր ջուրով : Ասոր վրայ ալ լեմոնի թթու կամ մածուն չատ լաւ կը յարմարի :

28. ԲԱՆԶՈՐԻ ՑՈՂՈՒՆ (Պորանի) . — Բանջարի ցողունի (բազուկը) մանրէ՛ , լուա՞ , կէս խաչէ , ջուրը քամէ , պազջրէ , պատրաստուած միսին վրայ լիցուր , երկու ժամու չափ կամաց կրակի վրայ եփէ : Վրան դիր տոմաթէս . $\frac{1}{4}$ ժամ ալ եփէ : Ուտելէ առաջ լաւ սխտոր-մածուն լիցուր վրան :

29. ՈԼՈՌ (Պիգելիա) . — Ոլոռը կէս խաչէ , քամէ , պազջրէ : Միսը ծանօթ ձեւով պատրաստելէ վերջ քիչ մը

Հուրով $\frac{1}{2}$ ժամի չափ եփէ։ Խաչած ոլոսը վրան լեցուր։ Քիչ մը շաքար (մէկ օխային 30-40 տրմ.) աւելցուր և $\frac{1}{2}$ -
2 ժամ եփէ։ Վար առնելէ քառարդ ժամ առաջ տոմաթէս
զիր։ Եփելէ վերջ մածուն աւելցնելը կամաւոր է։

Միաք պահելու է որ կերակուրին մէջ երբ չաքար կը
դրուի՝ աղը քիչ ըլլայ։

300 հոգիի $\frac{3}{2}$ լիոր կը բաւէ։

30. ՍԵԽ ԲԱԿԼԱ. — Մատղաշ բակլան մաքրէ, ման-
րէ, խաչէ, բամէ, միսին վրայ լեցուր, աղ զիր, առաս
առմաթէս և քիչ մէն աղ սամիթ (ուղինէ) լեցուր։ Եփելէ
վերջ աղուոր մածուն-սխառով ոսոգէ։

Ամէն բուսեղէն թարմ ըլլալու է և մաքրուած օրը ե-
փելու է, մանաւանդ այս, որ սպասելով կը սեւնայ։

31. ԶՈՐ ԱՍԼՈՐ (Էրիկ). — Սե, թթու սոլորը քիչ
մը թրջոց զիր, մաքրուր մը լուա՛։ Կոխածոյի ծանօթ մի-
սը առանց սոխի պատրաստելով վրան ջուր լեցուր և մի-
սը մասամբ եփէ։ Երբ միսը եփելու քիչ կը մնայ, սա-
լորը լեցուր։ Կարճ ատենէն կ'եփի։

32.ԿԱՆՈՉ ՏՈՄԱԹԷՍ. — Կանաչ տոմաթէսը երկու-
քի ձեղքէ, և ձեռքով լու մը ձնչէ, ձմռէ և կրցածիդ
չափ մէջի կուտերը հանէ, կակզցուր, յեաոյ լուա՛։

Կոխածոյի յատուկ սոխով կարմրած միսին վրայ քիչ
մը ջուր լեցուր և կէս ժամ եփելէ վերջ լուացուած տոմա-
թէսը լեցուր, աղէ, և $\frac{1}{2}$ ժամ եփէ։



Գ. ԽՈՐՏԻԿՆԵՐ

Խորտիկներու վրայ ծանօթութիւն տալէ առաջ կարեւոր է յևտագայ բառերու նշանակութիւնը, և կամ միսին ո՞ր մասերուն համար գործածութիլը հասկնալ: Պէտք է երեւակայել կողի կամ ոչխարի ամբողջ մարմինը ինչպէս որ կը ներկայանայ սպանդանոցին մէջ, մօրթելու գործուգութիւններէն վերջ:

1. Կերտան .— Վիզը .
2. Skoչ .— Վիզին և առջեւի ոտքին մէջտեղը, կուրծքը :

3. Թեւ .— Առջեր սրունքը :
4. Պրծոյն .— Վիզէն մինչեւ պոչը, կանակի սոկու, ողնայարը :

5. Էյկիլիւ .— Կողի սոկուները (գապուրզա) : կամ ամբողջ վանդակը ուր ստամոքսը և թոքը կը կենան :

6. Ֆիլիքօ .— Կողերը մինչեւ հանեւի սրունքը չեն հասնիր, այլ կողնոսկրերուն և հանեւի սրունքին մէջտեղը սոկոր չկրող և միսով գոցուած մաս մը կայ, որ կը կոչուի ֆիլիքօ : Ողնայարի սոկորին (սլրծոլային) կից է :

7. Օրբալլիս .— Այս միաը ֆիլէթոյին վարի կողմը, կենդանիին փորի կողմը, սրունքին և փորին իրարու կըցւած տեղն է :

8. Պուտ .— Ետեւի սրունքին վերի մասը, զիստը պատով զուտ միան է :

9. Պուտ Պունի .— Պուտին ետեւի կողմը, զիստին պոչի կողմէն գէպի ներս մտած մասն է մինչեւ յօդուածը :

10. Զիմէկ .— Պուտախն և ոտքին միջեւ, ոտքէն ձիշդիեր, մինչեւ յօդուածը գտնուող մասը :

33. ՊՐԾՈՂԱ. (Մարա) .— Ողնայարին (սլրծոլա) ամին մէկ սոկորները իրարմէ կը զատես դանակով մը ,

յեսոյ թակով (թոխմախով) կը ծեծես, մաս մը կը տափակցնես, աղն ու պղպեղը կը ցանես։ Սոխր մեքենայով քաշելով, կոմ ճեղքելով և ճնշելով ջուրը կը հանես և միսին վրայ քսելէ վերջ մէկ ժամ կը սպասեցնես։ Յեսոյ սաճի մէջ կոմ կասկարայի վրայ կը կարմրցնես։

34. ԹԱՐՄԻ ԽՈՐՏԻԿ. — Մէկ օխա պուտի միս փոքր քառակուսիներով (գուշ պացի) կը մանրես. ջիղերը մաքրեւէ վերջ սոխ, պղպեղ, պահար կը լեցնես և թասի մը մէջ դնելէ վերջ ուրիշ չայն կաթսայի (թէնձիրէ) մը մէջ թա սով մէկտեղ հակառակ կը շրջես, այնպէս որ թասին մէջ մնայ և անով գոցուի։ Մէկ դգալ ջուր կը լեցնես, մէկուկէս ժամ կ'նիփես։ Եթէ ջուրը բաւական առատ ընկա և անոր կէսին չափ ալ մաքուր և լուացուած բրինձ լեցնես, այն առենե կ'ունենաւ եղինձ (րիլաւ) մը որ թասը կը արջապատէ։ Եփելէ վերջ թասը հանէ զգուշութեամբ և եթէ թասին վեր՛ ծայրի միսր լաւ չէ եփած՝ րիլաւը առնելէ վերջ միսր խառնէ քիչ մուշով կը կարմրի։

35. ՇԻՇԻ ԽՈՐՏԻԿ. — Միսին քիչ խւզոս մասը կամ պուտը բնկուզի չափ խոշոր քառակուսիներով մանրէ, քիչ մը պատճնան կլոր կլոր մանրէ, տռմաթէսի փոքրերէն ալ առ և միսին խւզոս մասը պատճնանին մօտ բիրելու պայմանով մէկ միս, մէկ պատճնան և մէկ առմաթէս չարէ երկաթէ մասնաւոր շիշերու վրայ և կասկարայով կամ ուրիշ կերպով մը կրակին վրայ դիր, կամաց կամաց դարձուր մինչեւ որ ուզածիդ չափ կարմրի։

36. ՇԻՎԵՐՈՒԻ ՎՐԱՅ. ԽՈՐՏԻԿ. — Փայտէ բարակ շիւզեր (չէօփ) պատրաստէ մատիտի չափ երկայն և հովանոցի թելին մօտ բարակութիւնով։ Ֆիլէթոյին և (պուտ պուռնիի) կոկուզ և թոյլ միսերը մանրէ և խրառու. կից խիտ խիտ շարէ, քիչ մը կորագ իւղ քսէ և կրակարանին վրայ շարէ։ Կարմրելէն առաջ անգամ մալ քսէ և արագ արագ դարձուր փոխն ի փոխը որ չայրի։ Փափուկ

և համեզ խորափիկ մը կ'ունենաս :

37. ԱՆՏԱՌԻ ԽՈՐՏԻԿ .— Գտանուեկ մը մորթէ, բայց
զլուխը ամբողջովին մի՛ կարեր : Փորոտիքը . թոքը ամբողջ
հանէ, ներսի կոզմը յուա՛ և աղէ . պուտախն մէկ քանի
ակագիրէն ծակէ, և մասով աղ լեցուր : Յետոյ աղի ջուր
քսէ : Մէկ ծայրէն միւս ծայրը երկար և տոկուն փայտ մը
անցուր : Զառիվայր տեղ մը շատ սասափիկ կրակ պատրաս-
տէ, պայմանով որ հովը վերէն վար փչէ : Յետոյ այն կոզ-
մը ուր հովը կ'երթաց, կրակէն մէկ կանգուն հեռու և ան-
կէ ցած տեղ մը դառնուելին հասակէն քիչ մը երկար եր-
կու բաղմապատկութեան (×) ձեւով փայտեր շինէ չորս
գաւաղաճներով, անոնց վրայ կոթնցուր գառնուկը կը-
րող գաւաղաճնը : Հովին հոսանքէն կրակին ջերմութիւնը
դառնուելին կը զարնէ : Միսին աակը ամսոն մը դիր որ իւ-
զերը մէջը կաթին : Յետոյ կամաց կամաց գարձուր . ամէն
10 բողէն անգամ մը աղ ջուր քսէ և 4 ժամ շարունակէ
եփել :

38. ՀՈՎԵԻԻ ԽՈՐՏԻԿ .— Մարդագեանի մը մէջ
մէկ սաք լայն և մէկ կանգուն խոր փոս մը փորէ, մէջը
առատ կրակ վառէ, մինչեւ որ փոսին սպատերը կարմրին,
եսյն ատեն փոսին մէջ մտնելու չոփ լայն և տափակ մա-
քուր քարեր շարէ կրակին շուրջ որ սասափիկ տաքնան :
Դառին միսը տափակ և քարերէն քիչ մը պղափիկ կտորնե-
րու վերածէ, աղէ : Յետոյ փոսին կրակը հանէ : Տակը տաք
քար մը իջեցուր, վրան կաոր մը միս . ուրիշ քար մը և
գարձեալ միս, և այսպէս շարունակէ մինչեւ որ փոսը լեց-
ուի : Վրան տաք քարով մը գոցէ, տերեներ ճիւղեր և
խոտ լեցուր, անոր վրայ ալ հողով գոցէ : $1\frac{1}{2}$ ժամ վերջ
զգուշութիւնով վրան բաց, քարերը վեր առ և միսերը
հանէ . փափուկ խորափիկ մը կ'ունենաս :

39. ՏԱՊՈՒԿԻ ՄԷՋ ԽՈՐՏԻԿ .— Կակուղ միսերը ձեռ-
քի չափ կամ տւելի փոքր կտրէ, թեթև մը ծեծէ, աղէ,

տապակի մը մէջ քիչ մը իւզ լեցուր . շերտերը վրան շարէ և երբ մէկ կողմէւ կարմրի . պատառաքաղով միւս կողմը գարձուր . երբ կը կարմրի տակի իւղին մէջ քիչ մը տոմաթէս արօրէ , եփ հանէ , և միսի կարմրած շերտերուն վրայ լեցուր : Կարճ տաենէն կ'ըլլոյ :

40. ՊՈՒՏԻ ԽՈՐԾԻԿ (Ռուրօ) . — Պուտի վարի ծայրը առ , ջիղերը . կարծր մաշկեր և ուրիշ անպես մասերը կարէ , միակառւր պուտը թող մնայ : Զայն 3-4 անգերէ ծակէ , աղ , պղպիղ և քանի մը պճեղ սխառը լեցուր և տապակի (թավա) մը մէջ դիր . քիչ մը ջուր և տոմաթէսի ջուր աւելցուր ու փառին մէջ քչէ , ուր 3 $\frac{1}{2}$ -4 ժամ թող մնայ : Մէջը եկած ստեն երբեմն իր ջուրով թրջելու դարձնելու է :

Եթէ ուզուի , մէջի ոսկորները առնել և կոսրելէ վերջ գարձնելով կաշելով կարելի է ուրիշ կերակուրի մը համար միսի ջուր պատրաստել :

41. ԿԱՐՄՐԱԾՄ ՀԱՅԿԱՀԱՐ . — Հնդկահաւը մորթելէ վերջ եփ ջուրը թաթխելով վեստուրները մաքրէ . նուրբ աղուտմազերը կրակի գոլին վրայ խանձելէ յետոյ փարսափը հանէ , մաքրէ , լուա՛ և չտփաւոր աղով տաք ջուրի մէջ $\frac{1}{2}$ - $\frac{3}{4}$ ժամ խաչէ : Ցեսոյ հանէ ոտքերը կապէ , տապակի մը մէջ դիր , իր ջուրէն մաս մը լեցուր և վրան քիչ մը ոլիւր ցանելով փուռը քչէ : Երբ այդ երեսը կարմրի , միւս երեսն ալ գարձուր և նորէն ալիւր ցանէ : Երբ քիչ մը կարմրիլ սկսի , շատ անգամ իր ջուրով թրջել և միւս երեսը գարձնել : Քիչ մը տոմաթէսի ջուր կամ սալցա ալ դիր : Բապտուէ 2 $\frac{1}{2}$ ժամ :

Սագ , բագ , հաւ , կաքաւ , ևն հայն կերպով կը պատրաստուին :

42. ՓՈՒՐ ԼԵՑՈՒԱԾ ԳԱՌ . — Գառնուկին գմտկը մաքրէ , մանրէ և հալեցուր : Լեարդը թոքը և սիրար մաքրէ , մանրէ և 100 տրամ գմակի իւղ տոնելով մէջը կար-

*մըրցուր : Յետոյ 300 արամ բրինձ մաքրէ , լուա՛ և 300 արամ ջուր , նաև աղ , պղպեղ , ուահսր , մաղամսոս դնելով եփէ մինչեւ որ ջուրը քաշէ . յետոյ մէկ կողմ առ որ պազի :

Առ գառնուկին միաը . վիզն ու որոնքը յօկուածէն կարէ , լուա՛ , մէկ գգալ աղավ լու մը աղէ , փորի համար պատրաստւածը մէջը լեցուր , փորին եղերքները իրարու բեր . գիմացէ գիմաց ծակէ և սաքերէն մէկը մէջէն անցուր եկասպէ , կամ փերը կարէ , տապտկին մէջ դիր . 2 քաշ ջուր և գգալմը աղ դիր և տաք փուռը քչէ . հակէ որ չայրի և միշտ դարձուր , ամեն կողմի վրայ կեցուր որ շաւաստր կարմրի : Երբ բաւական մը կ'եփի , ա՛լ մի՛ դարձրներ որ փորը չպատասխի : Կարմրելէն վերջ 10 բոսէն անգամ մը իր ջուրով օծէ , ո՛րքան շատ օծուր ա՛յնքան համեղ կ'ըլլայ : Վերջին ատենները (տամաթէսի) ջուր կամ սալցա աւելցուր : 4 ժամ թող եփի :

43. (ՕՐԹԱԼԲԻ) .— Օրթալիս մը առ , լաւ մը սրբէ փոքր տապակի մը մէջ դիր , վրան քիչ մ'ալ ջուր և աղ աւելցնելով բաւական մը կամբցուր : Երկու քի կամ երեքի ճեղքուած փաթաթէսներով չորս կողմը զարդարէ , փուռը քչէ : Միար շատ անգամ դարձուր որ երկու կողմը հաւասսար կարմրի և թէ՛ միաը՝ թէ՛ փաթաթէսները իր ջուրով օծէ : 3-3 $\frac{1}{2}$ ժամ եփէ : Եթէ ջուրը քաշէ , ջուր լեցուր : Եթէ կ'ուզես տամաթէսի ջուր կամ թթու ալ աւելցուր :

44. Պիֆթէֆ .— Կողի միաը կակուզ աեղերէն (օրթալիսին , պուտ պուռնիէն) և թեկրէն ճեռքի ճեռով կարէ և լու մը կարմրցուր իւղի մէջ : Յետոյ միաը հանէ և անզը լեցուր բաւական շատ սոխ , տակաւին լժան մը չկարմրած ալիւր դիր և ան ալ քիչ մը կարմրելէ վերջ տամաթէսի ջուր կամ թթու և կարմիր պղպեղ աւելցուր : Եսկէ քառորդ ժամ վերջ այս ամբաղջը խիս քամոյէ մը անցուր , քիչ մը ուահար ցանէ և ջուրը միսին վրայ լեց-

Նեղով եփ հանէ , կրակին մէկ կողմը քաշէ և կամաց կամաց 3 ժամ եփէ :

45 . ՓԱԹԱԹԵՍՈՎ . ԽՈՐՈՎԱԾՈՅ (Գզարտմա) . — Միուր կողի . սրունքի կամ ուրիշ յարմար ոսկորները մանրեկով ամանի մը մէջ ինքնիբամով քիչ մը կարմրցուր , քիչ մ'ալ բարակ մանրած սոխ , տոմաթէսի ջուր կամ թթու , կարմիր պղպեղ գիր և մինչեւ սոխին մեռնիլը եփէ : Նոյն առևն փաթաթէսը 4-6 կտոր ընկլով իւղի մէջ կարմրցուր միոխն վրայ աւելցուր և մէկ ժամ ալ կամաց կամաց գըթդացուր :

46 . ԶՐՈՏ ՄԱՆԲԱԾՈՅ (Ղըյմա) . — Թեյն և պուտին միաերը մանր մը ջարդէ , կարմրցուր , երբ բաւական մը կարմիր տօմաթէսի ջուր . կարմիր պղպեղ , և հազիւ ծածկելու չափ ջուր լեցուր և կամաց կամաց թող եփի :

47 . ՀԱԽԿԻԹՈՎ . ՊՐԾՈԼԱ . (Քօրլեք Պամեօ) . — Կողին քովի պրծոլան ծեծէ , հացի փորի փոշիին թաթխէ , յետոյ զարնուած հաւկիթին թաթխէ և իւղի մէջ կարմըրցուր :

48 . ԹՈՒՂԹԻ ՄԷՋ ՊՐԾՈԼԱ . — Պրծոլան կարէ , ազէ , իւղած թուղթի մէջ փաթթէ , և տապակով փուռը քչէ :

Դ . ՔԻՒՖԹԷ

49 . ԲԲԻՆՉՈՎ . ՔԻՒՖԹԷ . Կէս քաշ պուտի միուր միքենայով քաշէ , վրան լեցուր 50 տրամ լուազուած բրդինձ . ազէ , պղպեղէ , համեմ և մազտանոս աւելցուր և լու մը թրէ : Փոքրիկ գնդակներու վերածէ և կաթսային մէջ դնելով պարզ կամ միսի ջուրով ծածկէ : Եփելու աւեն քիչ մը կիսրոնի թթու դիր և կամ թերպիյէ մը տուր որ բացատրած ենք թիւ 3 կերակուրին մէջ :

300 հողիի 18 օխա միս 3 օխա բրինձ կը բուէ :

50. ՊԼԴԱԽՐԱՎ. ՔԻՒՖԹԵ. — Վերի ձեւով միաբ
քաշէ . բրինձի տեղ նայնքան կամ քիչ աւելի պլզուր լիցուր
և քանի մը դգալ գաղջ ջուրով լաւ մը թրէ մինչեւ որ
կակու զնայ : Միւս բաները ճիշդ վերինին նման են : Մէկ
ժամ մէկ քառորդ եփէ :

300 հոգիի համար 18 օխտ միս , 4 օխտ պլզուր կը
բաւէ :

51. ԱՅՆԹԱՊԻ ՔԻՒՖԹԵ. — 150 տրամ իւզոտ միս
քաշէ . աղէ . կարմրցուր և վրան քիչ մը մօնրած սոխ լի-
ցուր և մասամբ կարմրցուր , վրան աւելցուր պղպեղ , որա-
նոր են :

Պուտի միսը քաշէ և մէկ քաշին 100-150 տրամ . մա-
նրը պլզուր լիցնելով՝ քիչ մը գաղջ ջուրով լաւ մը թրէ :
Հաւկիթի մը չափ տռ , կարցուր ձախ ձեռքիդ մէջ դիր
և աջ բժմամառավոր խորունկ փոս մը բաց , յետոյ աւանց
ձեղքելու՝ զգուշութիւնով լայնցուր , այնպէս որ դգալ մը
զբյմա տոնէ , և վերի սոխով պատրաստուած զբյման
իւզովը առ փոսին մէջ լիցուր և եղերքները իրարու մօ-
տեցուր , ծակը գոցէ լաւ մը և ողորկցուր (ախւզեթ) որ
իւզը գուրս չելլէ : Զեռքովզ այնպէս մը ճնշէ և թեթէ
մը ծեծէ որ սոսի ձեւ տոնէ : Երբ ամբողջը շինես , կաթ-
սայի մը մէջ շարէ , պարզ կամ միսի ջուր աւելցուր մին-
չեւ որ ծածկէ . քիչ մ'ալ աղ լիցուր և եփէ : Զուրին վրայ
թիւ 1 կերպակուրին նման կրկին մը ընել լաւ կ'ըլլայ :

300 հոգիի համար 18 օխտ միս , 4 օխտ պլզուր . 4 օ-
խտ զբյմա և 3-4 օխտ սոխ :

52. ԻՉՄԻՐԻ ՔԻՒՖԹԵ. — 50 տրամ հացի միջուկ
մանրէ , ցորենի մաղէ անցուր ձեռքավոր ճնշելով և մա-
զին յատակին քսելով : Յետոյ կէս քաշ պուտի միս մեքե-
նայով քաշէ , վրան աղ , պղպեղ , պահար , 1-2 դգալ
ջուր լիցուր և հացին միջուկն ալ մէջը խառնելով լաւ մը
թրէ . ձեռքով 25ական տրամնոց տափակ շերտեր շինէ և

իւղասած տապակի մը մէջ շորելով փուռը քչէ , մինչեւ
որ լաւ մը կարմրի : Յետոյ ասոնք գոցելու չափ եռացած
չուր և առմաթէսի ջուր աւելցնելով $\frac{1}{4} - \frac{3}{4}$ ժամ եւս
եփէ :

300 հոգիի 3-4 նկանակի (սոմինի) միջուկ , 35 օխա
միս (ոսկորով) բաւ է :

53 . ԿԱՂԱՊԱՐՈՎ ՔԻՒԹԹԵ . — թիւ . 50 ին նման
միսն ու հացը պատրաստէ : Այս երկուքին խառնուրդը
թասերու տակը կանուազ ոտքին նման փոքր կորով մը
տափակ կլորներ կաղապարէ (զալիս) և տապակի մէջ շո-
րէ , 50 արամի չափ իւղ լեցուր և վառարանին փուռը
քչէ . կրնոյ վառարանին վրայ ալ ըլլալ : Երբար եփի նոյն
իսկ միսը իր ունեցած իւղն ալ զուրս կուտայ , որով գրր-
ուած իւղը շահովը եա կ'առնես :

300 հոգիի 3-4 նկանակի միջուկ և 30 օխա միս բաւ է :

54 . ԽԱՇՈՒԽԱԾ ՔԻՒԹԹԵ . — Առաջուց խաչուած
1 քաշ պազ միսը մեքենացով քաշէ , երկու հաւկիթի գեղ-
նուց , մազտանոս , աղ , պղպեղ լեցուր և լաւ մը թրէ :
Յետոյ հաւկիթին ձերմկուցները լաւ մը զարկ գտաթի
մը մէջ , դգուլ մը ձէթ և նոյնքան ալ ջուր աւելցուր և
կրկին զարկ : Այժմ թրուած միսը փոքր և երկար զլան-
ներու (մասուրա) վերածէ , և հացի մազուած միջուկի վը-
րայ գլորէ , անգամ մը հաւկիթի ձերմկուցին թաթիսէ
թեթև մը , և կրկին գլորէ , ու այսպէս քանի մը անգամ :
Յետոյ ձեռքով քիչ մը սեղմէ , ամփոփէ , և ամանի մը
մէջ շարէ : Ասոնք մետաքսի խոզակին ձեւը կ'առնեն : Ա-
մանավ տուատ իւղ հալէ , և ասոնք մաս մաս մէջը ձգե-
լով կարմրցուր : Բնաւ իւղ չի ծծեր , եւ երեսոյթով թէ
զեղեցիկ , թէ՛ համեզ կ'ըլլայ :

300 հոգիի 40 օխա միս կը բաւէ :

55 . ՀԱԼԵՊԻ ՔԻՒԹԹԵ . — 50 արամ խաչուած , մաք-
րըւած և լաւ մը արորուած փաթաթէսին վրայ երկու

հաւկիթի գեղնուց աւելցուր, լաւ մը թրէ : Յետոյ 1 քաշ քաշուած միախ հետ խամանէ և կրկին թրէ, վրան աղ, պըզպեղ, մազտանոս, քիչմիշ և ֆատբդ աւելցուր, լաւ մը խառնէ և $\frac{1}{2}$ -1 ժամ թող հանգչի : Վերջը հաւկիթի չոփ մեծ կտորներ առնելով տափակ ոսպնաձեւերու վերածէ, և ալիւրի մէջ թաթխելով առատ իւղի^(*) մէջ կարմրցուր : Այս ար շատ իւղ չի ծծեր :

300 հոգիի համար 22 օխա միս, 8 օխա խոշած փաթաթէս կը բաւէ :

56. ԳԱՏԵԼՆ ՊՈՒՏՈՒԻ . 50 արամ եփէ', վար առ և պազեցուր, 1 օխա պուտի միսը քաշէ : բրինձով լաւ մը թրէ, վրան աւելցուր բաւականաչափ ա'զ, մազտանոս, պղպեղ, և $\frac{1}{2}$ ժամ մը թող հանգչի : Յետոյ 25 արամնոց տափակ, ձեռքի չոփ շերտերու վերածէ, և տաբարակ, լայն ամանի մը մէջ ջուրը եփէ, և շերտերը տակը շարէ զգուշութիւնով : Երբ որ պէտք եղածին չափ եփին մէկիկ մէկիկ երեսը կ'ելին : Այն աանն չի արորուելու համար շատ զգուշութիւնով ծակուակէն շէրէփով մը տակէն ո՛ռ և մէկ կողմ շարէ : Երբոր պազին 5 հաւկիթ կոտրէ և շերտերը թաթխելով իւղի մէջ ձգէ որ լաւ մը կարմրին, երբ որ մէկ երեսը կարմրի միսը դարձաւր : Ամենալաւ կերակուրներէն մէկն է :

300 հոգիի համար 22 օխա միս, 3 օխա բրինձ, 110 հաւկիթ և 3 օխա իւղ կը բաւէ :

57. ՄԱՆՐ ՔԻՒԹԹԷ .— Մէկ օխա միսը մեքենացով քաշէ, մէջը պահար, պղպեղ, ծեծած սխասոր լեցուր, լաւ մը թրէ', փոքր մարմարներու չափ զնտիկներ շինէ և $2\frac{1}{2}$ քաշ ջուրի և մաս մը տամաթէսի ջուրի մէջ երկու ժամ եփէ' :

(*) Այս կարգի բաններու գործածուած իւղը միշտ պահելու է ուրիշ նման կերակուրներու, թէեւ կերակուրներու մէջ ալ շատ լաւ կը յարմարի :

58. ԿԱԼՍԿԱՐՈՅԻ. — Միան լուս մը ծեծել, և ազակ, ողպակով թրելէ վերջ մտախ երկարութիւնով փոքր տափակներ շննելու է, և կրակի վրայ շարուած շիշերու վրայ կարմրցնելու է : Կարմրած տանն եթէ իւզ քոռուէ աւելի համեզ կ'ըլլաց :

• • • • • • • • • • • •

Ե. ԵՂԻՆՉ (ՓԻԼԱԻ)

Ընդհանուր կանոն մըն է որ մեկ բրինձն ն եւկոչուր կը գործածուի: Նոյն ատեն բրինձին տեսակն ալ փորձելու է :

59. ԲՐԻՆՉԵՂԻՆՉ. — Պարզ կամ միար ջարը եռացուր, իր քանակութեան կէսին չափ մաքրուած բրինձը առատ ջարով երեք անգամ լուս և վրան լիցուր, քիչ մըն ալ առմաթէսի ջուր աւելցուր եթէ կ'ուզես, և երբ լուս մը եփելով ջուր քաշէ, վրան առատ հալած իւզ լիցուր և թող որ առեն մը հանգչի: Անկէ վերջ մաս առմաս երկարութէ մեծ դգալով մը բրինձը քրքրէ, իրարմէ զատէ: Սովորական չափն է 1 քաշ բրինձին 100 արած իւզ:

300 հոգիի համար 18 օխա բրինձ և կրկինին չափ ջուր :

60. ՈՒՐԻՇ ԶԵԽԻԾ. — Դզալ մը հալած, կարմրած կարագ իւզին վրայ արբա շէնրիյէսի լիցուր խառնէ, մինչեւ որ լուս մը կարմրի: Ցետոյ վրան աւելցուր կէս օխա բրինձ և քանի մը անգամ խառնէ: Վրան մէկ քաշէն քիչ աւելի առք պարզ կամ միափ ջուր լիցուր, երբոր եփի իւզով օծէ:

Նոյնը կրնայ պատրաստուիլ թեթևու մը խորով (էրիշաէյով) և ճիշտ շէնրիյէին պէս կ'ըլլաց :

Կրնայ նոյն խակ մաս մը շէնրիյէ և մաս մը էրիշաէ գործածուիլ, միայն թէ միշտ միաք պահելու է որ շէն-

րիսկին կէսին չափ , իսկ բրինձին կրկինին չափ ջուր կամ միսի ջուր լեցուի :

Շատ յարմար է որ նախապէս պատրաստուած ուսուրյի ջրով բլլայ , ինչ որ թէ՛ շատ համեղ և թէ՛ խնայուզական է :

Պէտք է յիշել նաև որ բրինձներու տեսակները կը տարբերին իրարմէ ջուր քաշելու մէջ , այնպէս որ սմանք իրենց կրկինէն տւելի և որիներ պակաս կ'ուզեն : Այս պարագան եփողին փորձառութեան կը թողունք :

61 . ՄԱՆՐԱԾՈՅԻ ԵՂԻՆՉ . — 150 տրոմ միար մեռքենայով քաշէ և աղէկ մը կարմրցուր , գիանալով որ քիչ կարմրածը լաւ չըլլար : Յետոյ երկու քաշ ջուր և մէկ քաշ լուսցուած բրինձ լեցուր և թող որ կամաց կամաց եփի : Վերջը առատ իւզով օծէ :

300 հոգիի բրինձէն զատ 13 օխտ միա կ'ուզէ :

62 . ԹՈՒԲԻ ՄԻՍՈՎ ԵՂԻՆՉ (ըլուզոյ իշի) . — Մանրածոյով պատրաստուածին պէս է : Թոքի , լեարդի , սրտի և երիկամունքի միսաին քաշուած միսէն կ'ըլլայ : Այս խառնուրդ միար իւզով լաւ մը կարմրցնելէ վերջ կրկին ջուր լեցուր , եփ համէն և ջուրին կէսին չափ լուսցուած բրինձ լեցուր : Պղպեղ և պահար անհրաժեշտ է : Շատ համեղ եղինձ մը կ'ունենաս :

63 . ՊԼԱՌԻԹԵ ԵՂԻՆՉ . — Պարզ կամ տւելի լաւը , միսի ջուրը կաթսային կէսը լեցուր , եփ համէ , ջուրին կէսէն քիչ աւելի պղպուր լեցուր . աղը այնքան մը լեցուր որ բոլորսին լուծուելէ վերջ բերնին բաւական մը աղի զայ : Եփելէ վերջ առատ իւզով օծէ և սպասցուր :

300 հոգիի 18 օխտ բրինձ և գրեթէ կրկինը միսի ջուր : Պլղուրի տեսակէն կախում ունի .

Եթէ միսի ջուր չկայ հետեւեալ ձեւը յանձնարարելի է : Քիչ մը իւղ կարմրցուր և պղպուրը մէջը լեցնելով առագ որագ խառնէ , մինչեւ որ քիչ մը կարմրի : Վրան

կրկինէն քիչ մը պակաս եփ ջուր և աղը լեցուր : Կարճ միջոցի մը մէջ պատրաստ կ'ըլլայ : Քիչ մը իւղով օծէ և և հանգչեցուր :

Պլղուրէ եղինձին (էրիշտէյովը) ճիշդ թիւ 58ին պէս կ'ըլլայ :

Իսկ մանրածոյովի (զլյժմալլ) համար լաւ 59 ին ձեւը լաւ է, միայն հում և քաշուած միսը կէս ժամ մը քիչ ջրով եփել և յևաոյ ջուրը ամբողջացնելով եփ հանել և պղղուրը լեցնել ամենէն համեղ կ'ըլլայ :

64. ՍԻՍԵՌՈՎ .— Սիսեռը թիւ 22ին նման իրիկ-ընէ զաղջ կիր ջուրով թրջոց դնելէ վերջ առառու շատ առատ ջուրով լաւ մը եփելու է : Յետոյ կաթսայով բը-րինձի եղինձին ջուրը եփ հանելով սիսեռը տաք տաք մէջը լեցնելու և ջուրին կէսին չափ բրինձով եփելու է : Սի-սեռը ջուրի չափին վրայ տարբերութիւն չի դներ : Եփելէ վերջ իւղով օծէ :

300 հոգիի 15 օխա բրինձ և 4 օխա սիսեռ մէկ բա-ժինի համար :

65. ՍՈՒԽՆԿՈՎ ԵՂԻՆՉ .— Սունկի երեսի անպէտ մասերը մաքրէ, լուա յետոյ եփող միսի ջուրի կամ պարզ ջուրի մէջ միսի նման մանրէ . 15 վայ կ. վերջ պղղուրը կամ բրինձը լեցուր և եփէ : Լաւ այրած իւղով օծէ :

66. ՊՈՒԼԴՈՐԻ ԵՂԻՆՉ .— (Փիլաւ) Գառնուկին լեցողը և թոքը (սեւ-ճերմակ ճիկէր) և թոքին և լեսրդին մէջտեղ գտնուող (ույգուլուխ)ը միասին խոշոր մը մանրէ մանրած միսին $\frac{1}{3}$ ին չափ բրինձ լաւ մը մաքրէ լուա, շատ բարակ մանրած սոխ, և սամիթ (թէրէ օթու բէզէնէ) լեցուր : Աղ և պղպեղ լեցուր և լաւ մը խառնէ : Գառ-նուկին փորսափին վրայի իւղոտ շապիկը (կէօմէք) փոէ : վերի խառնուրդը մէջը լեցուր, քիչ մը իւղ և քիչ մըն ալ ջուր ցանելով ծայրերը իրար բերելով կապոցի նման ծր-րարէ քերանը կարէ, փուռը քշէ և երբ նուռի նման կար-

մըրի հանելով բերանիր բաց :

67. ԹէՇԻՇ. ՓԻԼԱԽԻԾ. — Եղինաձր եփելէ վերջ աճունի մը մէջ լեցուր : Վրան ասպակակցուր : Գառնուկին խաչոծ ուղեղը (պէյն) կաթին սերովը լաւ մը զարնելով մածունի պէս շինէ , եղինաձին վրայ կէս մտափ չափ փուէ , փուռը առուր և բաց շագանակի գոյն կարմրցուր :

Եթէ կ'ուղես , խաւարը յիմոնով ծեծէ և կաղինի չափ կտոր մը եղինաձին վրայ զնելով կեր , թէ համեղ և թէ մարսողական է :

68. ԹԻՉՈՒԽՆՈՎ. ԵՂԻԽԵԶ . — Ուրիշ եղինաձներու նրանի պարզ ջուրով եփէ : Փոքրիկ թռչունները մաքրելէ վերջ տապակին մէջ քիչ մը տամաթէսով և խւզով կարմրցուր 20 վայրկեանի չափ : Թռչունները եղինաձին վրայ անցուր . ջուրն ալ մինչեւ կէսը մնալը եփէ և եղինաձին վրայ լեցուր :

69. ԱՃԵՄ ՓԻԼԱԽԻԾ . — Փէկլիփ միաը (տաման) մանրէ , աղէ և կաթսոյին մէջ լեցուր : Բրինձր իրեն չափ ջուրով , քիչ մը աղով կէս եփ րբէ և այս միան վրայ լեցուր : Ասոր վրայ առելցուր այրած իւզ և բերանը զոցելով , կափարիչին եղերքը խմօրով գոցէ որ բնաւ օդ չառնէ , և մաղմաղ կրակի վրայ 4 ժամ գթգթացուր , Կրակը քիչ ըլլալու և որ մէջի չոգիին ճնշումովը խմօրը չքակուի . եթէ խմօրը քակուի կը վիասուի : Ամենէն համեղ եղինձ կ'ունենաս :

Զ. ՄԱՔԱՐՈՆԻԱ

70. ՄԱՔԱՐՈՆԻԱ . — Կէս քաշ մաքարոնիա լաւ մը մաքրելէ և կոտրելէ վերջ երեք քաշ ջուրի և մէկ գգալ առաւ աղի մէջ խաչէ $\frac{1}{2} - \frac{3}{4}$ ժամու չափ , իր զօրութեան համեմատ : Վաղ առ , պաղ ջուրով կիսովի պաղե-

ցուր, քամէ ամանին մէջ լեցուր տուժաթէսի ջուր և քիչ
մը աղխրով խիւս (կրէվի) անցուր թիւ շին նման, վրան
անցուր տուատ կարմրած իւզ:

Սլխրով խիւսի տեղ կրնաս գործածել մանր քաշ-
ւած պանիր, մաքարոնիսյին մէջտեղերը խաւ խաւ շարե-
լով և տուատ տաք իւզով օծելէ վերջ 5 վայլ կեան մը գոց
ամանի մը մէջ սպացնելով:

71. ՄԻԱՅՎ. — Քաշուած իւզոս միոր լու մը կար-
մրցուր, վրան մեսցուր քիչ մը մանր սոխ և վրան ծած-
կելու չափ տոմաթէսի ջուր աւելցուր: Կամաց կամաց թող
եփի մինչեւ երկու ժամ: Միսին եփելու սկսելէն $1\frac{1}{2}$ ժամ
վերջ ստքարոնիան կէս ժամ մը տուատ և աղի ջուրի մէջ
խաչէ, քամոցին մէջ լից և կէս մը պաղեցուր, լու
մը քամուելէ վերջ ամանի մէջ քաշէ և պատրաստած
միոր եփ եփ վրան անցուր:

300 հոգիի 13 օխա միս 9 օխա մաքարոնիա բռւ է:

72. ՀԱԽԿԻԹՈՎ. — Մաքարոնիան վերինին նման
եռացնելէ վերջ քամէ: Քանի մը հաւելիթ լու մը զարկ,
մանր պանիրի հետ խոսնէ, և ամանի մը մէջ խաչած մա-
քարոնիային վրայ անցուր, խոսնէ, վրան լեցուր կարմր-
րած իւզը և վառարանի կամ ուրիշ փուռ մը քշէ մինչեւ
որ երեսը կարմրի:

300 հոգիի 14 օխա մաքարոնիա, 100 հաւելիթ, $3\frac{1}{2}$
օխա պանիր:

73. ՄԻԱՅՎ. — Քաշուած միսի մանրածոյ (զլյմա)
պատրաստէ: Նոյն ատեն մաքարոնիան վերի ձեւով խա-
չէ, քամէ, պաղջրէ, և յետոյ կարդ տու կարդ մաքա-
րոնիա և միս շարէ, տաք իւզ լեցուր և բերանը գոցե-
լով տաք տեղ մը 45 րոպէ թող սպասէ:



Է. ՄՈՒՍԱԿԱՆԵՐ

74. ԱՄԲՈՒԿ (Պատընանան) .— Սմբուկը մաքրէ : Ճեղքէ , և երկու երեք կարելէ վերջ աղէ և ժամուս մը չտփ սպասցուր : Յռատ ջուրով լուա՛ , քամէ իւզի մէջ կարմրցուր և տապակին մէջ շարէ : Իւզով միսը մանրածոյ շինէ և վրան մէկ քաշին 80 արամի հաշուով րրինձ , մազտանսո , պահար , աղ , պղպեղ , սոխ իրենց չափերավը լեցուր : Խառնէ , և տապակին մէջի սմբուկին վրայ լեցուր : Վրան ծածկելու չափ պարզ կամ միսի ջուր լեցուր , և վրան ամբողջովին գոցելու չափ տոմաթէս շարէ և փուռին մէջ կամ կրակարանի վրայ եփէ :

Ոմանք միսը լաւ մը կը կարմրցնեն , և յետոյ րրինձ եւն . կը լեցնեն , բայց փորձով դտուծ եմ որ հումը շատ աւելի ախորժելի կ'րլայ :

300 հոգիի 300 սմբուկ , 15 օխտ միս . 3 օխտ րրինձ :

75. ԳԵՑՆԱԼԽՆՉՈՐ (Փարարէս) .— Գետնախնձորը կեղեւէ , կլոր կլոր մանրէ և առատ ջուրով լուա , աղէ , և իւզով լոււ մը մարմրցուր : Յետոյ վերինին նման տապակի (թավա) մէջ շարելով նոյն կերպով պատրաստուած միս , րրինձ , եւն . լեցուր և փուռի մէջ եփէ :

76. ԴԴՈՒՄ .— Դդումը մաքրէ , մանրէ , լուա , իւզով քիչ մը կարմրցուր և ճիշդ թիւ 74ին նման պատրաստելով եփէ :

77. ԿԱՂԱՄՄԲ (Լահանայ) .— Կաղամբը մանրէ , մէկ ժամի չափ առատ ջուրով խաչէ : յետոյ քամէ , պաղջրէ : Քամելէ վերջ տապակին մէջ լեցուր : Վրան լեցուր թիւ 68ին նման միս ու րրինձ : Պէտք է յիշել որ միսը շատ իւզոտ ըլլալու է : Նաև րրինձի աեղ նոյնքան կորկոտ կ'րլայ : Միսին մէջ սոխ դնեն ալ նոյնքան կարեւոր է :

78. ԼՈԼԻԿ (Տումարէս) .— Թիւ 74 ին նման միսը և րրինձը առատ սոխով և միւս բաներով պատրաս-

տէ : Լովիկներու կոթէն մաքրէ և սեւ , վնասուած տեղեւրը կարէ . յետոյ կլոր կլոր կարտէ , լուալով կուտերը հանէ և տապակին մէջ մաս մը շարէ , վրան քիչ մը միսի խառնուրդէն լիցուր , կրկին լովիկ շարէ , և այսպէս կարգ կարգ , մինչեւ ուզածիդ չափ : Վրան լովիկով դոցէ , և 1.30 ժամ եփէ :

Մէկ բաժինի համար 300 հոգիի 16 օխա միս , 3 օխա ըրինձ :



Ը. ՓՌԵՓ (ԹԱՂՎԱՅԻ)

79. ՍՄԲՈՒԿԻ ՓՌԵՓ .— (պարզճան թափա) Միար սրբէ , անպէտ մասերը հանելով փոքր փոքր (դուշ պաշի) մանրէ և կարմրցուր : Երբոր միար իւղը թող տալ սկսի , մանրած սոխ աւելցուր , և քիչ մըն ալ կարմրցուր : Յետոյ կարմիր պղպեղ , տօմաթէս և կանաչ պղպեղ (եթէ կայ) լիցուր , ու խառնելով վար տու և տապակին մէջ լիցուր : Նոյն ժամանակ սմբուկը մանր քառակուսի ձեւով մանրէ , աղէ , տանն մը սպասցուր , և լաւ մը լուս որ դառն համը ելլէ . քիչ իւղի մէջ կարմրցուր միսին վրայ լիցնելով վրան զոցելու չափ ջուր լիցուր և փուռ քչէ :

80. ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ՓՌԵՓ .— Միար վերինին նման պատրաստելով տապակին մէջ շարէ : Վրան սփռէ կեղուած , մանրած և լուացուած գետնախնձոր և անոր վրայ ալ աղ , պղպեղ , կանաչ պղպեղ (խօօթ) , տօմաթէս և ծածկելու չափ ջուր : Փուռը քչէ և սպասցուր մինչեւ որ ջուրը քաշէ և գետնախնձորը կարմրի :



Թ. SOLUS

81. ՏԵՐԵՒԵԼ ՏՈՂՄԱ. — Մէկ քաշ իւղոս միսը քաշէ, աղէ և 150 տրոմ բրինձ կամ եարժա լեցնելով՝ մազահոս, պղպիղ, համեմներ, տոմաթէսի ջուր աւելցուր և լաւ մը խառնէ: Յետոյ որթատունկի տերեւը (եափրու), եթէ թարմ է առք ջուրի մէջ թառամնցուր, իսկ եթէ աղով պահուած է, լաւ մը լուս, և մէջը քիչ մը միջուկ դնելով փաթթէ, կաթացին մէջ շարէ, վրան պարզ կամ միսի ջուր և քիչ մը աղ լեցնելով մազմաղ (շատ քիչ) կրակի վրայ եփէ: Աւտեկու առեն մածուն ոխտորով օծէ:

300 հոգիի 15 օխա միս, 6 օխա բրինձ կամ 7 օխա եարժա:

82. ԿՈՂԱՄԲՈՎԸ ՏՈՂՄԱ. — Ճիշդ վերինին նմանէ, միայն տերեւի տեղ բաւական մը խաշած կաղամբին կոթէն հեռաւ, շիտակ տերեւները կը գործածուին:

83. ԴԴՈՒՄԵԼ ՏՈՂՄԱ. — Սազըզ գապաղըն չափաւոր մեծութիւնով կլոր կլոր կարելէ վերջ միջուկը փորէ, լուս, աղով ներսի երեսները չփէ, և 81 ին նման միջուկ մը պատրաստէ, առատ սոխով, միսով և բրինձով: Մաս մըն ալ մազամնոս (աղատքեղ) և բէզէնէ (տօրտղ օթի) լու կ'ըլլայ, դդումի իւրաքանչիւր կտորին մէջի բացուածքն մէջ այս միջուկէն մաս մաս լեցուր, միայն թոյլ թող մնայ սր բրինձին աճելու աեղ մնայ և փափուկ իշնայ: Երկու ժամէն կ'եփի: Վրան մածուն-ոխտոր անցուր:

300 հոգիի 11 օխա միս և 3 օխա բրինձ:

84. ԼՈԼԻԿՈՎԸ ՏՈՂՄԱ (տոմաթէս). — Լոլիկը կոթին կողմէն մաս մը կտրէ, բայց մի փրցներ որ կափարիչի նման մնայ, յետոյ մէջի կուտերը և ուրիշ մասերը մատերովդ հանէ, թիւ 81 ին նման միջուկ մը պատրաստելով իւրաքանչիւրին մէջ քիչ քիչ լեցուր, և կափարիչի

ձեւով բերանները զոցէ , և բովէ քով շարէ կոմմասյին մէջ : Ասոնց հետ եթէ մաս մըն ալ կանանչ պղպեղին մէջ լիցուի , շատ լաւ կ'ըլլայ : Վրան ջուր լիցուր և փուռը քչէ կամ մաղմաղ կրակի վրայ կամաց կրամաց թող եփի $1\frac{1}{2}$ ժամ :

300 հոգիի համար 16 օխա միս , $3\frac{1}{2}$ օխա բրինձ կը բաւէ : Շատ քանակութիւնով պատրաստելու ատեն փոխոնակ զատ զատ լոլիկին մէջը լիցնելու՝ կրնանք այսպէս ընել : Նախ լոլիկը քանի մը կատր կը կտրենք և լուալէ վերջ տապակին յատակը մտս մը կը շարենք , յետոյ վրան մաղտանոսով բրինձի և միսի խառնուրդէն խաւ մը կը լիցնենք : Կրկին լոլիկով կը ծածկենք և ոյսպէս կարգ կարգ , որքան որ ուզուի . յետոյ վրան լոլիկով կը գոցենք և փուռը կը քշենք :

85. ԿԱՆԱՆՉ ՊՂՊԵՂՈՎ . — Տօլմացու պղպեղը առ կոմին մօտէն դանակով նեղ և կլոր մը կարելով կոմիը հունտով միասին հանէ , եփ ջուրի մէջ 5-10 վարկեան ըստացուր որ կակուդնայ , թիւ 81ին նման միջուկ մը պատրաստէ . թոյլ մը լիցուր և $1\frac{1}{2}$ ժամ եփէ :

86. ՍԵՐԿԵՒԻՆ (Հայկա Տօլմասը) . — Սերկեւիկը մաքրէ , սրբէ , և մէկ դպալ միտ առնելու չափ խոսով մը բաց կոթին կազմէն . թիւ 81 ին նման միջուկ մը պատրաստէ . որուն մէջ միայն բրինձ , միտ , մաղմանոս և պահար զրանըւի : Սերկեւիլին մէջ քիչ քիչ լիցուր , բերանը գէսփի վեր շարէ . վրան ջուր և քիչ մը աղ աւելցուր և մաղմաղայի վրայ կամ փուռին մէջ 2 ժամ եփէ :

87. ԵՍԼԱՆՃՐ ՏՕԼՄԱՍԸՆ ԶԵԹՈՎ . — Մէկ օխա սոխ մէջտեղէն ճեղքելով տափակ տափակ մանրէ , կաթսայի մը մէջ լիցուր և ձեթով կարմրուր , մինչեւ որ կարմրի սկսի . անմիջապէս 100 տրամ լուացուած մաքուր բրինձ , մաղմանոս , սեւ ու կարմիր պղպեղ դիր և 1 հատ կիտրն (կիմոն) սեղմելով քիչ մըն ալ տոմաթէսի ջուր աւելցուր : Որթատունկի տերեւին մէջ մաս միս դնելով՝ լաւ մը

փաթթէ որ չի քակուի . ծայրերը տակը բերելով քիչ հեռաւորաթեամբ կաթսային մէջ մէմէկ շարէ . վրան ջուր աւելցուր . վրան իջևելիք կափարիչով մը զոցէ որ ճնշելով չքակուի , կամաց կամաց 3 ժամ եփէ . մինչեւ որ ջուրը քաշուի : Պաղ թէ առաք կ'ուառուի :

300 հոգիի 6 օխտ բրինձ . 18 օխտ սոխ պէտք է :

88 . ԶԵԹՈՎ ՊՐԱՍԻ ՏՕԼՄՈՒ . — Պրասը մէկ կուշաէն մինչեւ կէսը ճեղքելով խաշէ , յեաոյ խաւ խաւ անջատէ և վերինին նման (թիւ ծ7ին) միջուկ մը պատրաստելով քիչ քիչ մէջը դիր և փաթթէ . կաթսայի մը մէջ քովէ քով շարէ , աղ և ջուր լեցուր . Ասոր թթուն առատ դնելու է : Դարձեալ ջուրը քիչ , և եթէ հասանի նորէն առաք լեցնելու է : Շատ կամաց կամաց զթզթացնելու է երկու ժամի չտի :

89 . ԿԱՂԱՄԲՈՎ . — Թիւ 87 հալանճը տօլմային պէս կ'ըլլայ , միայն տերեւի տեղ կաղամբի (լահանայ) խաշած տերեւ կը դործածուի :

90 . ԻՄԱՄ ՊԱՅԼԱՏԸՆ . — Ամբուկը (պաթլըմոն) մաքրելէ վերջ 2-3 տեղէ ճեղքէ և մէջը լեցուր սխառը , մաղտանսու և սոխ , ձէթով կարմրցնելէ վերջ կաթսային մէջ շարէ զգուշութիւնով , և քիչ մը ջուրով և աւելցած ձէթն ալ վրան լեցնելով կամաց կամաց եփէ :

Երբ մեծ քանակութիւնով կ'եփի , կարելի է սմբուկը չերա չերա կարել , ձէթով կարմրցնել և տապակին մէջ լեցնել : Այն առեն սոխ , սխառը . մաղտանսու , առատ տօմաթէսով տօմանճին կարմրցուր և աւելցած ձէթով միայն կարմրած սմբուկին վրայ լեցուր , սփոէ , և քիչ ջրով $1\frac{1}{2}$ -շ ժամ եփէ :

91 . ՄՈՒՄՊԱՐ ՏՕԼՄԱՍԸՆ . — Աղիքի մէջի կողմը դուրս բեր . թեփով լաւ . մը չփէ տախտակի կամ քարի վրայ . յեաոյ կիրի ջուրով լաւ մը լուս և պաղ ջուրով ցողուէ : Կրկին շիտկէ . մէկ ծայրը կապէ և գէպի ներս

քշէ այդ կտապուած ծացրը որ ինքն իրեն մէջը կը դառնայ .
միջուկը լեցուր և միշտ ներս քշէ , մինչեւ որ ամբողջովին
լեցուի : Միջուկը պարզ լրինձ կամ պլղուր է , որ ազավ .
քիչ մը ջրով , պղպեղով , մազանոսով են . քիչ մը կը
թրուի : Երբ լեցուի աղիքի արաւաքին կողմը ներս կու-
գայ : Զուրին մէջ 2 ժամ եփէ :



Ժ. ԽՄՈՐԵՂԷՆՆԵՐ

92. ՊԱՆԻՐՈՎ ՊէՕՐէԿ .— Քիչ մը քացխու խմո-
րով , աղով և կաթով կամ գաղջ ջուրով ամուր խմոր մը
թրէ : Եթէ քանի մը հաւկիթ ալ կարես , աւելի լաւ կ'ըլ-
լայ . Ընկոյզէն քիչ մը մեծ կարներու վերածէ , բարակ
մը բաց , մանրած պանիրը մէկ կէսին վրայ լեցնելով միւս
կէսը վրան բեր , ատամնաւոր մեքենայով կամ ձեռքով
եղերքները լաւ մը գոցէ , և երկու երեսն ալ առատ իւ-
ղի մէջ կարմրցուր :

93. ԼԻՒԼԻ ՊէՕՐէՅԻ .— Թիւ 92 ին նման խմոր մը
պատրաստէ : Հաւկիթէն մեծ գունդեր առ և եռխային
(լավաշ) շատ աւելի բարակ բաց և փոէ որ քիչ մը քաշ-
ուի : Նոյն միջոցին մէկ քանի հաւկիթ , մանրած պանիր ,
և մազանոս իրար խառնէ : Բացուած լավաշները կէս
թիզի չափ լայն չերաներու վերածէ , միջուկէն մաս մը առ
և լայնքին չարէ , մէկ քանի անգամ պլորէ , գարձուր .
և կորելով հաւկիթին ճերմկուցով փակցուր : Ցեաոյ ա-
ռատ իւղի մէջ կարմրցուր :

94. ՍԻՆԻ ՊէՕՐէՅԻ .— Թիւ 92 ին նման խմորը կը
պատրաստուի : Ցեաոյ շատ աւելի մեծ գունդեր առ եթէ
խմորդ քիչ է , երկուքի բաժնէ և բարակ մը բաց՝ եռ-
խայի թանձրութիւնով , երեսը լաւ մը իւղէ , երկու մա-
տի լայնութիւնով երկար չերաներու վերածէ , յեաոյ մէկը
առ և ինքն իր վրան ժապաւէնի նման փաթթէ , յեաոյ

ուրիշ մըն ալ ասոր վրայ , և այսպէս ամբողջը վրայէ վը-
րայ փաթթէ զգուշութիւնով , և հաւասար մը կրկին բաց
քու սինիդ մեծութիւնով . սինիդ իւղէ և մէջը դիր :
Վրան քոէ ոհւէ պատուղի անուշ մը կամ թթու մը , և
կամ պանիր ցանէ , և ուրիշ դունդ մըն ալ ճիշդ ասոր
նման պատրաստելով այս առաջինին վրայ ծածկէ , կրկին
մակերեսը իւղէ , և բազւավայի ձեւով կամ ուրիշ կերպ
կտրտելով փուռը քչէ և կտրմբյուր :

95. ՏԵՇԵՑԵՐՄԵՒ .— Ճիշդ վերինին նման խմորը կը
պատրաստուի , անոր նման կը բացուի , կ'եփուի և փաթ-
թրւի , միայն հոս կաորները փոքր պէտք է ըլլան , կամ
քիչ պիտի փաթթուլին օր խրաքանչիւրը մէկ մարդու
բաւէ : Կրկին , երկու հատ վրայէ վրայ պիտի չգրուի այլ
առանձին առանձին , և իւղի մէջ պիտի կտրմբի : Վրան
շաքար կամ մեղք ցանելու է :

96. ԶԵԹՈՎ .— Վերինին նման է , միայն ձէթով
պիտի քսուի և անով ալ պիտի կտրմբի և անուշ դրուի :

97. ՄԱՆԲԱԾՈՅ (Ղ.ՂՅՄԱԼԲ) ՊԵՇԵՑԻՅԻ .— Թթու խը-
մորով և առանց հուկիթի կարծր խմոր մը թրէ . փոքր
փոքր կաորներ առ և բաւտկան թանձր մը բաց : Մե-
քենայով քաշուած միար առատ սիսով , մաղանոսով ,
պահարով լաւ մը կտրմբյուր : Յետոյ փոքր ու կլոր
բացած խմորներդ ա՛ռ և մէկ կէսին վրայ մանրածնն լե-
ցուր և միւս կէսը վրան բերելով ծածկէ , եղերքները
լաւ մը գոցէ , և իւղի մէջ կտրմբյուր :

98. ՍԻՆԻ ՄԱՆԹՀԱԸԸ .— Քիչ մը տղով՝ առանց քաց-
խուի խըմոր մը թրէ և եռխայի մեծութիւնով և նոյն-
քան թանձր բաց : Տափակ գծիչի ձեւով փայտ մը չափ
լուսրելով շերտ շերտ կտրէ , յետոյ կրկին միւս կտղմէն
խաչածեւ կտրէ , որով փոքր քառակուսիներու վերածած
կ'լաս : Յետոյ 91 թիւին նման ղըյմա պատրաստելով կտ-
ղնի չափ խրաքանչիւրին վրայ լեցու՞ր և պոչերը երկեր-

կուք բանէ մատներուդ մէջ և սեղմելէ վերջ այդ իրարու եկած սլոչերն ալ կրկին իրարու մօտեցուր և քառակուսի ամաններու ձեւը առուր : Սինիին վրայ քիչ մը իւզ քսելէ վերջ այս պատրաստածներդ (մանթբները) վրան շարէ, ծակուակէն շերեփով վրան իւզ ցանէ հաւասար մը, և փուռը քչէ որ կարմրի : Յետոյ գուրս քաշէ, առատ պարզ կամ միսի ջուր լեցուր և քառորդ ժամ եփէ : Եթէ կ'ուզես, վրան մածուն, սխառը և բարտկ անուխ անցուր :

99. ՊԱՏԱՌԻԿ (լօգմա) պարզ ձեռով .— Էւս մը քացիսած և թիժուելով ուսած կէս օխու խմոր առ և կաթով նուրյուր . յետոյ մէկ զգալ սօսա և երկու զգալ կաթ իրարու խառնելով խմորին վրայ լեցուր և լաւ մը կակուզցուր : Յետոյ ափիդ մէջ խմորէն մաս մը առ և սեղմելով մեծ ժամիդ կողմէն քիչ մը դուրս հանէ և թրրջած զգալով մը կաղինի չափ կամ քիչ մը մեծ կատրներ կարելով շատ տաք իւզի մէջ ձգէ և հաւասար մը կարմրցուր : Անմիջապէս թանձր շաքարաջուրի մէջ ձգէ, հանէ : Պաղելէ վերջ տւելորդ շաքարը կրկին վրան լեցուր :

100. ՊԱՏԱՌԻԿ .— Բ. Զեւ . Երեք հաւեկիթ կոտրէ և լաւ մը զարկ, երկու գաւաթ կաթի խառնէ : Երկու զգալ սօսան ալ քիչ մը կաթի խառնէ և հաւեկիթին վրայ աւելցուր . վրան թէյի գգալ մը զըրըմ թարթար և քիչ մը ալիւր խառնէ մինչեւ որ 97. թիւի խմորին թանձրութեան համար . յետոյ նոյն կերպով կլորներ առ զգալով և տաք իւզի մէջ նոյն կերպով կարմրցուր : Շաքարի ջուր անցուր :

ՀՐՈՒՇՈԿ (հէրիվա) .— 150 տրամ իւզ այրէ, մէկ օխա ամենալաւ ալիւր ձեռքովդ քիչ քիչ ցանցլնելով փայտէ գգալով անդադար խառնէ և կամաց կամաց ամբողջ ալիւրը կերցուր : Յետոյ գգալին տակով միշտ տրաբելով ամանին մէկ կողմը քաշէ, յետոյ կրկին տրորելով քիչ քիւս դին քաշէ և այսպէս շարունակէ, մինչեւ որ իւզը թող տայ և պճրաւով եփիլ սկսի . խելոյն վար

առ 300 արամ ջուրի մէջ լուծուած շաքարի թանձր սուսի (շերտէթ) մը շինէ և մէջը լեցնելով լաւ մը խառնէ . որ կոչտ կոչտ չի մնայ : Ամանին բերանը մաքուր , ճերմակ լաթ մը կապէ և բերանը դոցելով մէկ քառորդ ժամ սպասուր :

102. ԻՄՐԻԿԵ ՀՐՈՒՇԱԿ (իմրիկ հեղվասը) .— 150 արամ կարմրած իւզի մէջ մէկ օխա լաւ իմրիկ լեցուր , խառնէ մինչեւ որ վերի հրուշակին սհանիկն չափ րլայ : Ծետոյ վար առնելով 300 արամ տաք կաթ լեցուր վրան : Ուտելու ատեն բարակ շաքար ցանելու է :

103. ԹԷԼ ԳԱՏԱՅԻՖԻ .— Մէկ օխա շինուած գատայիֆ առ և ծանծաղ ամանի մը մէջ լեցուր , խմորները կտրէ , մանրները մէջտեղը տեղաւորէ և ձեռքով լաւ մը շիտկէ . վրան ծակոտիկն շերեփով մը 100 արամ տաք և անլի մաքուր իւզ ցանէ , և քիչ կրակի վրայ բարձրէն դիր , մինչեւ որ մէջի խոնաւութիւնը քաշուի և տակը կարմրի : Երբեմն դարձնելու է որ հուտասար կարմրի : Վար առ , 15-30 բուպէ մը սպասցուր և վերջը հացը եւ լած փուռը քշէ և մէկ ժամ թող կենայ , մինչեւ որ եւ րիսը լաւ մը կարմրի : 150 արամ ջուրի մէջ 250 արամ շաքար լուծէ , եփէ , յետոյ գատայիֆը դուրս հանէ , քատակուսի կարտէ և անմիջապէս տաք տաք շաքարի ջուրը լեցուր , վրան ճերմակ մաքուր լաթով մը դոցէ և 15 բուպէ վերջ կատրներէն իւրաքանչիւրը կարգով տակն ու վրայ դարձուր : Ուտելու ատեն ճեղքելով մէջը սիր դնել մեծ առաւելութիւն մըն է :

104. ԲՆԿՈՒԶՈՎ ԳԱՏԱՅԻՖԻ .— Գատայիֆին կէսը ափսէին մէջ շարէ , յետոյ մանրուքները լեցուր , տառը վրայ խորաված և մեքենայով քաշուած կամ ծեծած ընկոյզ լեցուր՝ քիչ ար գարէնֆիով խառնելէ յետոյ : Գատայիֆին մնացեալ մասն ալ լեցուր , 103ին ծեւով եփէ , փուռը քշէ և անուշ լեցուր :

105. ԵՔՄԵՔ ԳԱՏԱՅԻՖԻ .— Երկու հատ էքմէք
գատայիֆի առ , երկու երեք ժամ թրջոց դիր , լաթի
վրայ վաէ որ քաշուի : Բաւական թանձր շաքարի շու-
րուպ մը պատրաստէ և քանի մը չերիփ ափսէին մէջ էի
ցուր , գատայիֆներէն մէկը վրան դիր և երակին վրայ
եփէ մինչեւ որ շաքարին մէջ գատայիֆը կարմրի , արագ
արագ շարժէ և տեղափոխէ որ յատակը չայրի : Երբ մէկ
երեսը կարմրի , միւսն ալ դարձուր և եփէ մինչեւ որ
ոսկեղոյն կարմրի : Եթէ շաքարի ոռովոք քիչ գայ , կրկն
լիցուր : Յետոյ ճիշդ այս կերպով միւսին երկու երեսներն
ալ հաւառարապէս կարմրցուր : Երկուքին մէջտեղը սեր
դիր և վրայ վրայի պատկեցուր :

106. ԳՈՒՐՍԱՊԻՑԻ .— 250 արամ շատ մաքուր իւզ
լաւ մը զարնելով ձերմիցուր , յետոյ մէկ օխա մազուրած
բարակ և մաքուր շաքար լիցուր և իւզին հետ լաւ մը
խառնէ : Առոր վրայ տւելցուր մէկ օխա շատ մաքուր տ-
վիւր և թրէ մինչեւ որ համնի (թավը գայ) : Տապակին մէջ
թուղթ դիր և վրան շարէ այս խմորը կանոնաւոր ձեւեր
տալով : Աւելի յարմար է տափակ կաղապարներով ձեւել :
Փուռը քչէ և երեսը չկարմրելու համար վրան թուղթով
գոցէ :

107. ԴԴՈՒՄՈՎ ՊԵՕՐԵԿ .— Շատ քիչ ազով չա-
փաւոր խմոր մը շինէ և ափսէիդ մհծութիւնով 12 հատ
բաց՝ կրցածիդ չափ բարակ : Ափսէն իւզէ , թերթ մը դիր
և վրան իւզէ , և միշտ այսպէս իւզալով վեց թերթը շա-
րէ : Վրան ցանէ հետեւեալը . 1 օխա դգում ոհնէտէ ըրէ ,
շատ քիչ աղ ցանէ , չորս հաւկիթ , գաւաթ մը կաթ .
երկու սուրճի գաւաթ սիմելինա , մհծ թէյի գաւաթով մը
ծեծած շաքար , քիչ մըն ալ տարչին , կամ վանիլիա լի-
ցուր , իրար խառնէ և դիր թերթերուն վրայ , հաւառար
մը սփուէ : Մնացեալ վեց թերթերն ալ շարէ վրայ վրայի՝
միշտ իւրաքանչիւրը իւզելով : Բազլավայի ձեւով կարէ ,

վրան իւզ քսէ և փուռը քշէ : 20-30 բողեջն կ'եփի :

108. ԱԽՐԻՇ Ս.Ժ.Ն. ՏԵՍԱԿ .— Խմորը վերխնէն քիչ
մը հաստ բաց : Դդումը ոհնետէ լրէ , շատ քիչ աղ , քիչ
մը ծեծած տարչին դիր . բացուած թերթերէն մէկը առ և
վրան գդումի խառնուրդէն մաս մը սփոէ : Վերջը դէմ
դէմի երկու ծայրերէն ոլորէ՝ մինչեւ որ երկուքն ալ մէջ-
տեղը իրարու հանդիպին : Մէջաեղէն գանակով կարէ , եր-
կուքի բաժնէ , և անոնցմէ մէկը առ և յետոյ մէկ ծայրէն
բոնելով միւսը անոր բոլորախքը զարձուր հարցական նշա-
նի (?) ձեւով : Երբ այդ վերջանայ , ուրիշ մըն ալ առ ,
քիչ մը ոլորէ և առաջինին շուրջը փաթթէ նոյն կերպով ,
այսպէս միւս կառներն ալ կարգով աւելցուր՝ մինչեւ որ
ափաէն լեցուի . վրան իւզ քսելով փուռը քշէ : Եփելէ
վերջ վրան շաքար կամ ուեէ անոյշ լեցուր :

109. ՍՊԱՆՆԱԽՈՎ. ՊէօՐէկ .— Սպաննախը մեքե-
նայով քաշէ . յետոյ լաւ մը սեղմելով գեղին ջուրերը
վազցուր , քիչ մը սպանիր ալ քաշէ և քանի մը հաւկիթ
զարնելով սպանիրին խառնէ և յետոյ սպաննախին վրայ
լեցուր և խառնէ , Յետոյ 108ին նման խմորի թերթեր
բաց , անոր նման վրան սպաննախ սփուելով գոյէ . եր-
կու հանդիպագիր (դիմացէ զիմաց) ծայրերէն փաթթելով
իրարու բե՛ր , մէջաեղէն կարէ , քիչ մը ոլորէ , և մէկ
ծայրէն բանելով միւս ծայրը անոր շուրջը սպանցուր հար-
ցական նշանի կամ փաթթուած ժապաւէնի ձեւով : Յետոյ
շաբունակէ ուրիշներ ալ անոր շուրջը փաթթել նոյն նա-
խընթաց բաները ընելէ վերջ , շաբունակէ մինչեւ որ ափ-
աէն լեցուի , վրան իւզէ և փուռը քշէ : Անոյշ գնիլ չու-
զեր :

110. ԲԱԳԼԱՎԱ .— Քաղջ ջուրով խմոր մը թրէ և
չափին համեմատ 2-4 հաւկիթ կարքէ : Ալիւրը առաջին
կարգի լլալու է , իսկ խմորին կարծրութիւնը դմակի
նման գակուղ լլալու է : Պղտիկ գունդերու վերածէ , յե-

առյ առուած ալիւրով և վերջը նշայով կրցածիո չափ բարակ բաց : Շատ բարակ ըլլալը պայման է : Բանալէ վերջ չորս տարբեր կերպերով կը պատրաստուի :

Առաջին . — Ափսէնն յատակը թեթեւ մը կ'իւղիս , վրան կը սփռես շատ նուրբ բացուած թերթերը՝ իւրաքանչիւրին մակերեսը զատ զատ իւղելով . մինչեւ 12-15 շարք կը շարես բացուածքին նրբութեան և եվողին կամքին համեմատ : Այս շարքերուն մէջտեղը . եթէ ուղիս , խորոված և շատ մանր լնկոյց և կամ խորիս կրնաս գնել : Խորիսիը ճիշդ հրուշակին (հէլլա) նման կ'ըլլայ , միայն անուշը չոււաեր (ահս թիւ 99) : Յետոյ բագլավային համբածանօթ ճեւով կը կտրես , երեսը թեթեւ մը կ'իւղիս և տաք փուռը կը քշես : Եթէ փուռը սաստիկ տաք է , վրան թուղթ մը դիր և թա՛զ մինչեւ որ երեսը կէս մը կարմրի : Այս միջոցին առատ և սաստիկ տաք իւղ պատրաստէ և կէս կարմրած խմօրեղէնը փուռէն հանուածին պէս այդ տաք իւղը ծակուակէն շերեփով առատ առատ վրան լիցուր , մասնաւորաբար կտրուած ճեղքերուն մէջ , որովէսզի թերթերը յանկարծ բշթուկին , ուռին : Նորէն փուռը քշէ , մինչեւ որ տակն ու վրան հաւասարապէս կարմրի : Հանելէ վերջ քիչ մը շեղակի դիր տփաէն և բագլավաներէն մէկ երկուքը ցած կողմէն հանելով , դգալով մը աւելորդ իւղ . եթէ կայ . քաշէ , և թող որ պազի : Վրան մեզը և կամ շաքարի թանձր լուծոյթ (շէրպէթ) լիցուր :

Երկրորդ . — Բացուած նուրբ խմօրը սփռէ . իւղէ , վրան ցանէ խորոված և շատ մանր լնկոյց . յետոյ օխավուին վրայ վաթթէ , և երկու ծայրերէն ճնշելով կեղրոնին վրայ հաւաքէ ծալ ծալ , և մէջէն օխավուն հանէ : Բոլորը այսպէս ճնելէ վերջ՝ սփռէն մէջ շարէ , իւղէ , փուռի մէջ կէս մը կարմրացուր և սաստիկ տաք իւղով ոծէ վերինին նման :

ԵՐՐՈՐԴ .— Բացուած և իւղ քսուած նուրբ խմորին վրայ շատ մանր խորսված ընկոյզ ցանէ , օխշավուին փաթթէ , ՚նոյն կերպով ուրիշ մըն ալ փաթթէ ասոր վրայ , յետոյ մէջի փայտը հանէ , ձեռքովդ թեմեւ մը ճնշելով տափակցուր , բագլավայի հանրածանօթ ձեւով կտրտէ և միւս բոլոր գործողութիւնները անթերի և խնամով կտատրէ :

ՉՈՐՐՈՐԴ .— Իւղած և ընկոյզ ցանուած խմորը օխշավուին վրայ փաթթէ , փայտը մէջէն հանէ , լաւ մը ուրբէ , և թիւ 108 ին նման մէկ ծայրէն բանելով ինքն իր վրայ փաթթէ , ժապաւէնի նման : Մնացեալ գործողութիւնները առաջին ձեւին պէս են :

ԱՆՊՅԱԾ միշտ պազելէն վերջը լեցուր , որ խմոր չի կարի :

—————
○○○○○○○○○○

ՃԱ. ԱՅԼԵՒԱՅԼՆԵՐ

111. ԳԱ.ԳԱ.Օ (ըմպելի) .— 100 տրամ խմելու մաքուր ջուր առ և եփէ . յետոյ թէյի չորս լեցուն դդալ գագաօ առ և եփած ջուրէդ քիչ մը առ . գաւաթի մը մէջ գագաօն լաւ մը տրորէ և ջուրին մէջ լեցուր և քառորդ ժամ եփէ : Յետոյ 200 տրամ կաթ լեցուր , եփ հանէ և ուզածիդ չափ շաքար լեցուր : Զորս հինգ գաւաթ կրնայ ըլլալ

112. ՓՕՍԹՈՒՄ (ըմպելի) .— Ցորենի ֆապրիքայէն ելած և միջակ հաստութեամբ մէկ օխա թեփ առ , տապակի մը մէջ լեցուր և վառարանի կամ հացի փուռը քշէ և դգալով անդադար խառնէ որ հաւասար մը կարմըրի : (Կրակի վրայ չուտ կայրի և չըլլար) : Տաք տաք երկու դգալ պէքմէզ լեցուր և դգալով խառնելով թեփին կերցուր , յետոյ եթէ պէտք ըլլայ , ձեռքով ալ լաւ մը տրորէ որ կոշտ չի մնայ : Կէս օխա ալ դարի առ , և

սուրձի տապակի մը մէջ մինչեւ բաց սրճագոյն կարմրքցուր : Լաւ մը ծեծէ և ալիւրի մաղէն անցուր : Երեք դզալ պէքմէզով խառնուած թեփէն և մէկ դզալ խորոված գարիէն առ և մէկ ոռ կէս օխա ջուրի մէջ խաչէ , քառորդ ժամու չափ : Հինգ րուզէ հանգչեցուր , թել քամոցով քամէ , 100 կամ 200 տրամ կաթի խառնէ , եփէ և ուզածիդ չափ շաքար լեցուր : Մօտաւորապէս 10 գաւաթ կ'ըլլայ :

113 . ՍԻՒՏԼԱԾ . — Մէկ օխա կաթը եփէ . վրան 50 տրամ մաքուր և լուացուած բրինձ , 50 տրամ շաքար լեցուր , և մէկ ոռ կէս ժամ եփէ : Վար առ և ամաններու մէջ լեցուր որ անշարժ պաղի և սեր կապէ :

300 հոգիի 30 օխա կաթ , 3 օխա բրինձ և 3 օխա շաքար պէտք է :

114 . ՄԱՀՈԱԼԷՔՊԻ . — 25 տրամ բրինձը 200 տրամ ջուրով եփէ մինչեւ որ բրինձը հալի : Յետոյ խիտ պատառով (կատ) մը քամէ : 75 տրամ բրինձի ալիւրը 600 տրամ զուտ կաթի մէջ տրորելով անցուր և քամուած բրինձի ջուրին վրայ լեցուր : 120 տրամ շաքար աւելցուր և շատ քիչ կրակի վրայ եփէ և միշտ փայտէ դզալով մը խառնէ , մինչեւ որ դզալին վրայէն չի վագելու չափ թանձրանայ . յետոյ վար առ և ամաններու մէջ լեցուր որ պաղի : Վրան բարակ տարչին ցանէ :

115 . ՍՊԱՆՆԱԽ . — Սպաննախը մաքրէ' . լուա' , յեյտոյ մանրէ' , խաչէ' և քամոցին մէջ լեցնելով պաղջրէ :

Միաը մեռենայով քաշէ , քիչ մը ջուրով , աղով կարմրցուր . յետոյ քիչ մը բրինձ և անոր կրկինին չափ ջուր լեցուր և եփէ : Երբոր ջուրը բոլորովին քաշուի , սպաննախը զգուշութիւնով խառնէ որ չի տրորուի : Շատ կամաց կրակի վրայ կէս ժամ եփէ : Վրան քիչ մը իւղով սոխրած ըրէ , և սոխը կարմրելէն վերջ մէկ դզալ ալիւր աւելցուր , և կարմրելէ վերջ սպաննախին վրայ լեցուր :

116. ԱՊՈՒԽՏՈՎ. ՍՊԱՆՆԱԽ. — Սպաննախը վերի ձեւով խաշէ և ոլաղջուէ, թող որ քամուի: Նոյն ատեն իւզոտ ապուխտը բարակ մը մանրէ և քիչ մը իւզով կար, մըրցուր, սպաննախը վրան լեցուր, զզուշութիւնով խառնէ և կամաց կրակի վրայ կէս ժամ եփէ:

117. ՀԱԽԿԻԹՈՎ. ՍՊԱՆՆԱԽ. — Սպաննախը վերի ձեւով լաւ մը խաշելէ և քամելէ վերջ շատ քիչ իւզով դարձուր: Ուրիշ ամանի մը մէջ, խրաքանչիւր անձի մէկ հաւկիթ, իւզով եփէ, և երբ բաժիններու կը վերածես իւրաքանչիւր սպաննախի բաժնի վրայ մէկ հաւկիթը իր եփած իւզովը լեցուր: Եթէ բաժիններու չես վերածեր, ոյն ատեն կրնաս սպաննախին խառնել: Դարձեալ, երբ սպաննախը իւզով եփած է, կրնաս հաւկիթները եռացած ջուրի մէջ կոտրել և ծակոտելն չերեկով մը տակէն վնրցնելով բաժիններուն վրայ դնել: Այս վերջին ձեւը համի մասին տարրեթիւն չ'ըներ:

118. ԻՒՂՈՎ. ՀԱԽԿԻԹ. — Քանի մը հաւկիթ կոտրէ ամանի մը մէջ, աղէ և վրան տաք տաք կարմրած իւզ լեցուր: Եթէ իւզին տաքութիւնով եփածը բաւական չես սեպեր, կրակին վրայ քիչ մըն ալ քթքթացուր: Այս սպարագային մէջ հաւկիթները անաղարտ մնալով կրնաս մէյմէկ հատ բաժնել:

119. ՄԱԾՈՒԽՆՈՎ. ՀԱԽԿԻԹ. — Լաւ բռնած իւզոտ մածունը ամանի մը մէջ դիր, լաւ ծեծուած քիչ մը որխտոր խառնէ: Հաւկիթները իւզով եփէ և մածուն-սխտութին վրայ լեցուր:

120. ԶՈՒՄՉԵԴ. — Հինգ հաւկիթ կոտրէ և մէջը 2 դգալ նշայ լեցուր, և լաւ մը զարկ: Քիչ մը աղ ձգէ՛: Քիչ մը մաքուր իւզ կարմրցուր և զարնուած հաւկիթը վրան լեցուր, պատառաքաղով մը մէկ ծայրէն վերցուր և նայէ՛. երբ մէկ կողմը կարմրի, միւսը դարձուր: Եթէ աղը քիչ է, կրնաս վրան որեւէ անուշ մը դնել:

121. ԶՈՒՀԱՅԻՒԹ. — Կալուզ նկանտելը (սոմին) և կամ պիտքն բարակ շերտերու վերածէ և երկու երեսները՝ կոտրած և լաւ մը զարնուած հաւկիթի մէջ թաթրէ, առատ խւզի մէջ ձգէ և երկու երեսն ալ կարմըրցուր. վրան շաքար կամ որեւէ անուշեղէն դիր:

122. ՀԱՅԿԻԹՈՎ ՍՄԲՈՒԿ (պարլրնան. — Սմբուկ վուսոփի մը կամ մոխրապատ կրակի մէջ եփէ, խորովէ: Յեսոյ կեղեւը հանելով միջուկը լաւ մը զարկ, տրարէ, աղ ցանէ: Իւրաքանչիւր երեք ոմբուկի մէկ հաւկիթ կոտրէ զատ ամանի մը մէջ, լաւ մը զարկ և ծեծուած ոմբուկին վրայ լեցնելով խառնէ: Մէկ կամ քանի մը կըտորով խւզի մէջ կարմըրցուր երկու երեսն ալ:

123. ԼՈՂԻԿՈՎ ՀԱՅԿԻԹ. — Լոյիկին (տումաթէս) կոթը և չուրջի կարծր մասերը կարէ, ամանի մը մէջ քողի քով չարէ: Քիչ մը միսի ջուր և քիչ մը աղ դիր և վէ քով չարէ: Քիչ մը միսի ջուր և քիչ մը աղ դիր և կրակարանին վրայ ինքն իր չողիով կամաց կամաց եփէ: Վար առ և գցալով մը իւրաքանչիւր լողիկի մէջտեղէն վսս մը բաց և մէջը հաւկիթ մը կոտրէ, եփէ և պանիրի բարակ տաշուք լցուր:

124. ԵՂՋԻԽՐ. — Կանոչ սոխը մանրէ, քիչ մը իւղով կարմըրցուր, վրան առատ ջուր լեցուր և $\frac{1}{4}$ ժամ եփէ: Ուզածիդ չափ հաւեկիդ կոտրէ, աղէ, զարկ և վրան լեցուր, մէկ եփ ելածին պէս վար առ և լեցուր կրտկով խորոված չոր հացի կտորուանքներու վրայ:

125. ՄԻԼԱՄԱ. — Հարիւր տրամ իւղոս ապուխտ նուրը մը մանրէ, մէկ դդալ արդար խւզ այրէ և ապուխտ մէջը կարմըրցուր: Սմանի մը մէջ լեցուր և վրան քառնի մը հաւկիթ կոտրէ, առանց խառնելու կամ շարժելու կրակին վրայ դիր, մինչեւ որ հաւկիթները եփին՝ թող ժնայ: Վրան կիարոն (լեմոն) քամէ:

126. ՄԱՆՐԱԾՈՑ ՄԻԼԱՄԱ. — Միսը մեքենայով քաշէ, եթէ իւղը քիչ է, քիչ մը իւղ դիր և կարմըրցուր, ա-

մանի մը մէջ լեցուր, հաւկիթները վրան կոտրէ, կրակի վրայ դիր մինչեւ որ հաւկիթները եփին: Վրան կիտրոն քամէ:

127. ՄԱՆՐԱԾՈՅՈՎ ԲԻՑԵ. — Հարիւր արամ իւղոտ հում միս առ և քաշէ, վրան աղ և կարմիր ու սև պղպեղ լեցուր, քիչ մըն ալ տօմաթէսի ջուր լեցուր և թրէ: Զորս գունդ խմորը բիտէ շինէ, միաը չորս հաւասար մասի բաժնէ և բիտէներուն վրայ հաւասար մըսիւէ, և տաք վուռին մէջ քչէ:

128. ԱՊՈՒԽԵՏՈՎ ԲԻՑԵ. — Մանրածոյի տեղ իւղոտ ապուխտ սփուէ և վուռը քչէ, քանի մը վայրկեաւնէն կ'ըլլայ:

129. ՊԱՆԻՐՈՎ ԲԻՑԵ. — Մէկ բիտէին մէկ հաւկիթ, գզոլ մը մանր պանիր, քիչ մը մաղսանոս իրաւրու խառնէ: Բիտէին խմորը նեղ ու երկայն մը բաց, մէջտեղը՝ խմորին երկայնքին պանիրի և հաւկիթէ խառնուրդը սփուէ, երկու կողմերէն, լայնքին, քիչ մը բաց թողելով: Յեաոյ այս բաց մնացած մասերը դէպի մէջտեղը՝ պանիրին վրայ ծալլէ՝ մէջտեղէն 1-2 մասի չափ բաց մը թողելով: որ պանիրը լման մը չծածկուի, երկու ծայրերը միայն գոցէ, վրան քիչ մը կարագ իւղ քոէ և վուռը քչէ:

130. ԱՊԱՆՆԱԽՈՎ ԲԻՑԵ. — Թիւ 129 ին նման կը պատրաստուի, խմորին վրայ խաչխաշ, սողաննախ և հաւկիթ պիտի դրուի:

131. ԿԱԹՈՎ ԴԴՈՒԽ. — Մեծ կամ պղպիկ տողդացու դգումը կեղեւէ, միջուկը զատէ, մանր մը ջարդէ, և քիչ մը աղով խաչէ, ջուրը քամէ, տեղը կաթ լեցուր մինչեւ որ երեսը ելլէ. մէկ ժամու չափ եփէ: Վրան քիչ մը իւղ կամ սոխրած լեցուր:

132. ՈՒՐԻՇ ՏԵՍԱԿ. — Դդումը խաչելէ վերջ քամէ, կաթի տեղ քիչ մը պարզ ջուր լեցուր, կէս ժամ

մը եփէ : Յետոյ առատ իւզով սոխրած շինէ , մէջը դգալ
մը ալիւր լեցուր և սոխրածին իւզով բոհրէ , քիչ քիչ
կերակուրի ջուր աւելցուր և վերջը կերակուրին մէջ լե-
ցուր : Կէս ժամ ալ թող եփի : Ասիկա աւելի աժան և
նոյնքան համեղ է :

133. ԻԻՂՈՎ ՏԱՊԿՈՒԱԾ ԴԴՈՒՄ .— Դդումը եր-
կու դանակի եաեւի հասառութիւնով երկայն ու բարակ
տափակ շերտերու վերածէ , ալիւրի թաթիւէ և իւզով
կամ ձէթով կարմրցուր :

134. ԽԱՇՈՒԱԾ ԵՒ ԿԱՐՄՐԱԾ ՓԱԹԱԹէՍ .— փա-
թաթէսը խաշելէ վերջ շատ բարակ և կլոր մանրէ , աղ ու
պղպեղ ցանէ , տապակին մէջ քիչ մը իւզով կարմրցուր :
Դգալով չի խառնուիր . պէտք է թօթուելով խառնել :

135. ԾԵԾԱԾ ՓԱԹԱԹէՍ .— Փաթաթէսը լուա ,
խաշէ , կեղուէ և ծեծէ , կամ մեքենայով քաշէ , վրան
քիչ մը կարագ իւղ և աղ լեցուր և կաթ խառնէ մինչեւ
որ խիւսի պէս կակուզնայ : Ամանին մէջ դիր և վրան
մէկ հատ իզմիրի քէօֆթէ ջուրով լեցուր (տիս թիւ 52) :

136. ՀԵՇ .— Խաշած կամ խորոված միսերու աւել-
ցածները , կամ կարմրած միսը մեքենայով քաշէ , փա-
թաթէսն ալ խաշէ և մեքենայով քաշէ կամ լաւ մը ծե-
ծէ , քաշուած միսին խառնէ , աղ ու պղպեղ ցանէ , և
քիչ մը միսի ջուր , կամ կաթ , և աւելի լաւ ըլլալու հա-
մար՝ մէկ դգալ կարագ կամ մաքուր իւղ լեցուր . տապ-
կոցին տակը իւղէ , խառնուրդը մէջը լեցուր , տապկոցին
մէջ հաւասար մը շիակէ և դգալ մը իւզով կամ կաթով
կրկին օծէ , և տաք փուռը քչէ ; մինչեւ որ երեսը կարմրի :

137. ԿԱՐՄՐԱԾ ՓԱԹԱԹէՍ .— Փաթաթէսը կեղ-
ուէ , կլոր կլոր կարէ , ջուրով լուա , բարակ աղ ցանէ և
ձէթով կարմրցուր :

138.— ՍԵՕՑԻԻՇ .— Հորթի , ոչխարի և գառի մի-
սէ կըլլայ : Վերջնը լուագոյն է : Առանց ուեէ ոսկոր

կստրելու միսին խաղ տեղերէն , յօդուածներէն կտրէ ,
մեծ ամանի մը մէջ խաչէ , մինչեւ որ միսը ոսկորին վը-
րայէն դիւրաւ ելլելու աստիճանին գայ : Յետոյ ոսկորնե-
րը հանէ , ջիղերը զատէ , և իւզստ և ոչ-իւզստ միսերը
իրար խառնելով ձեռքերովդ լաւ մը բղղնատէ , մազի պէս
բարակցուր : Նոյնպէս շատ բարակ ջարդուած աղասաքեղ
(մաղտանոս) , աղ , պղպեղ պատրաստէ : Միսին համեմատ
առավկոց (թավա) մը առ , մեծ և մաքուր լոթ մը առ և
կէսը եղերքներովը տապկոցին տակը փոէ , յետոյ վրան
բղղնատուած միսէն կարդ մը ցանէ , վրան մաղտանոս ,
աղ և պղպեղ ցանէ , կրկին միսի երկրորդ շարք մը , վը-
րան մաղտանոս , և այսպէս կարդ կարդ շարէ . մինչեւ
որ հասնի . վրան միս րլալու է : Վրան քանի մը շերեփ
միսի զուտ ջուրէն լեցուր հաւասարապէս , ձեռքովդ հա-
ւասարցնելով սեղմէ , տափակցուր , տակի կտաւին միւս
կէսը վրան սփուէ : Յետոյ տապկոցին բերնէն աւելի փոքր
մաքուր տախտակ մը դիր կտաւին վրայ , և վրան մեծ
ծանրութիւններ զետեղէ , թող որ այդ մեծ ծանրութեան
տակ մինչեւ լոյս սպասէ : Միւս օր միակտուր զանգուած
մը կ'ըլլայ , որ դանակով կը կարես և կը գործածես կե-
րակուրներու հետ :

Մնացեալ միսի ջուրը չինցած կերակուրներու գոր-
ծածէ :

139. ՊՈՂ ՄԻՍ .— Կողի պուտէն ոսկորը հանէ ,
կամ ոչխարի պուտը ոսկորովը խոշոր խոշոր կտրաէ , ա-
մանի մը մէջ դիր , հինգ սանթիմ , կամ երկու մատի
բարձրութիւն ջուր լեցուր , մէջը առատ աղ դիր և փու-
ռը քչէ : Շուտ շուտ միսի կտորներուն իւղ քոէ և դար-
ձուր : Երեք ու կէս ժամու չափ եփէ . յետոյ միսի ոս-
կորները հանէ , և թելլիկներու խաւին հակառակ ուղղու-
թիւնով նուրբ նուրբ մանրէ և ուրիշ կերակուրներու հետ
գործածէ :

140. ԽՍՇԱԾՄ ՄԻԱ. — Ոչխարի կամ հորթի միար կտրատէ և ջուրով, աղով և տօմաթէսի ջուրով լու մը խաչէ : Վրան իւզով և աղիւրով կրէվի մը շինէ թիւ 2 ին նման և ջուրին մէջ անցուք :

141. ՍԻՍԵՌԻ ԵՍՀՆԻ. — Իրիկուընէ գտղջ մոխրայուրով ճմուէ, և մինչեւ լոյս մէջը թող մնայ : Յեայ տռատ ջուրով բաւական եփէ, վրան աւելցուք տռատ իւզի մէջ մեռած սոխ : Շարունակէ եփել մինչեւ սխանախն եփիլը :

142. ՖԱՍՈՒԼԻՍ. ԵՍՀՆԻՄԻ. — Զոր լուրիան պարզ ջուրով իրիկուընէ թրչոց դիր : Առատ ջուրով մէկ ժամ եփէ, և տռատ իւզի մէջ մեռած սոխ լիցուք և երկու ժամ ևս եփէ : Վրան ձէթ լիցուք :

143. ՖԱՍՈՒԼԻՍ. ՓԼԱՔԻՄԻ. — Զոր լուրիան իրիկուընէ թրչոց դիր, տռատոն քամէ և կրկն տռատ ջուր լիցուք և լաւ մը եփէ : Եփելէ վերջ վրան սխանը աւելցուք : յեայ ձէթ, տօմաթէս, մաղտանոս, և կէս ժամ ալ եփէ : Վար առնելէ քառորդ ժամ առաջ շատ բարակ և ձէթի մէջ կարմրած հաց լիցուք : Ամանք տռաջուց սահպղին և սամկիթ (թէրէվիպ) ալ կը լիցնեն :

Եթէ իրիկուընէ լուրիան թրջուած չէ, կէս մը խաչելէ վերջ ջուրը քամէ և կրկն նոր եփ ջուր լիցնելով եփէ :

144. ԳԱԲՈՄԱ. — Ասկրուտ միսին ջիղերը հանելէ վերջ երկու մտափ մեծոթիւնով կարէ, վրան զոցելու չափ ջուր և չափաւոր աղ լիցնելով կէս ժամ եփէ : Յեայ վրան միսին մէկ ութերորդին չափ սոխ, օխային 1 - 2 հազար (մասով), մէկ վաւնջ թէրէվիպ քիչ մը մաղտանոս, տօմաթէս կամ սալցա լիցուք : Յերանը զոց երեք ժամ կամաց կրակի վրայ եփէ :

145. ԹՈՔ ԵԽ ԼԵԱՐԴ (Ալիկր) . — Թոքը և լիարով շերտ շերտ կարէ, ալիւրը թաթիսէ և իւզի մէջ երկու երեսն ալ կարմրցուք :

146. ԵՐԻԿԱՄՄՈՒՆՔ ԵՒ ԱՄՈՌՁԻՔ (պիլուր) .— Ա-
ստիք չերա չերա կտրէ . կեղեւը հանէ , ալիւրը թաթիսէ և
իւղի մէջ կարմրցուր :

147. ԳԱԾԻ ԹՈՐՔ, ԵԽԼԵ .— Գառի թոքը զուշ պա-
շի , մանր մը մանրէ և կարագ իւղի մէջ կարմրցուր ,
քիչ մը կանաչ սոխ , մաղտանոս , աղ , պղպեղ ցանէ և
չատ քիչ չուրով քթքթացուր :

148. ՓԱՅԾԱՂԲ ԼԵՑՆԵԼ .— Քանի մը փայծաղ
(տալախ) լաւ մը լուալէ վերջ՝ հաստ կողմէն դանակին
ծայրը խօթէ , և տուանց ծակելու լայն խոռոչ մը բաց ,
մասներդ մէջը խօթէ և սեղմելով մէջի արիւնները ամ-
բողջ հանէ , լաւ մը լուա . յետոյ քիչ մը րրինձ , աղ , պղպ-
եղ , մաղտանոս , սոխ և պահար խառնելով՝ այդ խոռոչ-
ներուն մէջ թոյլ մը լեցուր և բերանները կարէ : Յետոյ
եփ ելած չափաւոր աղով ջուրի մէջ ձգէ և եփէ մէկու կէս
ժամ : Վար առ , ջուրէն հանէ և պաղելէ վերջ՝ երկու
կողմը կարագ իւղով կարմրցուր : Վերջը դանակով ման-
րէ : Թէ՛ տաք և թէ՛ պաղ լաւ կ'ըլլայ :

149. ՏՈՏԻԿ .— Խանձուած տոտիկը (փաչա) գաղջ
ջուրի մէջ մէկ ժամ թրջելէ վերջ դանակով լաւ մը քերէ ,
պճեղներուն (կճզակ) մէջանեղը կտրէ և թաղանթները հա-
նէ . ոսկորին այրած տեղերը կտրէ , քերէ և աւելի մաքուր
ըլլալու համար կիրի ջուրով լաւ մը լուա և ցօլուէ : Պլ-
տուկին մէջ դիր , ջուրը և ազը լեցուր , ու իրիկուընէ տաք
փուռը քշէ , կամ չորս կողմը պաշտպանուած լաւ կրա-
կարանի վրայ դիր , փաթթէ , և մինչեւ լոյս անընդհատ
թող եփի : Յետոյ ոսկորները մէկէկ մէկիկ հանէ . միսը
մանրէ և վրան լաւ ծեծած սխառը և քայախ լեցուր :
Եթէ գլուխն ալ հետը դրած ես , կոարէ , ուղեղը հանէ ,
վրայի մաշկերը նետէ , մէջինը լաւ մը ճմլէ և տոտիկի
ջուրով լաւ մը խառնելէ վերջ մաքուր մնդուսով (տիւլ-
պէնտ) քամէ և տոտիկի ջուրին խառնէ :

150. ՔԵՇԿԵԿ.— Իլիկի ոսկորները, աղզրի ծուծով
ոսկորները, դմակի, տէօշի ոսկորները միտովը հանէ, պարզ
ջուրի մէջ դիր և լաւ մը լուա, որովէսդի ոսկորին մէջի
արխնը մաքրուի : Այս ոսկորներէն կէս օխային կէս օխա
եարմա զնելով աղէ : Իրեն յատուկ հողէ պտուկին մէջ
դիր, և կէս օխա եարմային երկու օխա կամ աւելի ջուր
լեցնելով իրիկունէ փուռը քչէ, կամ տաք թոնիրի յա-
տակը, կամ պաշտպանուած օճախի կամ կրակարանի
վրայ միջեւ լոյս անլնդհատ եփէ, առառն ոսկորները
զգուշութիւնով հանէ :

151. ՀԵՐԻՍՈՒ.— Հաւը կամ հնդկանաւը մորթէ,
տաք ջուրը ձգէ և փեսաէ, աղուամազերը մոմով կամ
առատ կրակի գոլին վրայ խանձէ, փորը մաքրէ, լաւ մը
լուա, և մէկ հաւին կէս օխա կամ մէկ հնդկանաւին մէկ
օխա կրուկու (չկոտրած և կեղեւը հանուած, ծիծած ցորեն)՝
լեցուր, փուռին մէջ, թոնիրին տակը և կամ փաթթելով
օճախին վրայ դիր և մինչեւ առառ անդադար եփէ : Յե-
տոյ վար ոռ, եթէ շատ թանձր է . քիչ մը եփ ջուր լե-
ցուր և կուտալով (տափակ ու նեղ փայտ) մը՝ ոսկորով
միասին երկար ստեն, առնուազն կէս ժամ, զարկ, մինչեւ
որ ամբողջը մէկ կաոր զանգուած մը րլլայ և կուտալին
հետ մէկ կաորով ելլէ . միան ու ոսկորը կը հալին և մէկ
կաոր խիւս կ'ըլլան : Ոսկորները զամէ զգուշութիւնով,
յետոյ ամանի մը մէջ լեցուր, մէջտեղը փոսէ և ուզածիդ
չափ այրած ու մաքուր կարագ խւզ լեցուր : Հերիսան ու-
րիշ միսով ալ կ'ըլլայ :

Այս և վերի կերակուրներուն մէջ (թիւ 140) բնաւ
կոտրած ոսկոր զնելու չէ, քանզի կտորները կրնան վը-
տանգաւոր րլլու : Միայն խաղ տեղերէն, յօդուածներէն
փրցնելու է :

152. ՀԻՒՆՔԵՍՈՒ ՊԵՑԷՆՏԻ .— Սմբուկը փուռի
մէջ և կամ կրակախառն մոխիրի մէջ լաւ մը եփէ, հանելով

կեզուէ , միջուկը լաւ մը ծեծէ , զարկ , աղէ , իւզով քառորդ ժամու չափ տառկէ :

Նոյն տաեն քաշուած միո կարմրուր , վրան քիչ մը սոխ մեռցուր , տօմաթէսի ջուր լեցուր , և լաւ մը թող եփի . իւզով կարմրած ոմբուկը ատք ատք ամանը լեցուր , մէջտեղ փոսէ և կարմրած միոր եփ եփ վրան լեցուր :

153. ԿԻՒՎԵՃ .— Միոը սրբէ , մանրէ , պտուկը լեցուր , վրան առաստ տօմաթէս , կանաչ պղպեղ , քանի մը պամիա , քանի մը սմբուկ , քիչ մը կանաչ լուրիա , զրդում , սոխ , մաղտանոս և թերէ օրու լեցուր , աղէ , պղպեղէ , մէջտեղը քիչ մը աղոխ լեցուր և բերանը լաւ մը գոցէ , փուռը քչէ և երեք ժամ եփէ :

154. ՇԱԳԱՆԱԿՈՎ ԶՈՐՊԱ .— 60 հատ խոշոր շագանակ մաքրէ , 300 տրամ միսի ջուրով խաշէ , վերջը քամոցին ծակերէն անցուր՝ վրայէն ճնշելով . յետոյ մէկ ուկէս օխա միսի ջուր լեցուր և եփէ :

Քովը իւղի մէջ կարմրած հաց դիր :



ԺԲ. ԶՈՒԿԻ ՏԵՍԱԿ

155. ԶՈՒԿԻ ԳԱԲԱՄԱ .— Զուկին թեփերը քերէ , պոչին կողմէն փորը ճեղքէ , փորոտիքը հանէ , քանի մը անգամ լուա , աղէ և պատկի մէջ շարէ , վրան քիչ մը իւղ լեցուր , կափարիչը զիր և խմորով լաւ մը գոցէ , երկու , երեք ժամ միջակ փուռի մէջ թող մնայ . հանելէ վերջ վրան լեմոն քամէ :

156. ՏԱՊԿՈՒՅԾ ԶՈՒԿԻ .— Զուկին թեփերը լու մը քերէ , պոչին կողմէն փորը ճեղքէ , փորոտիքը հանէ , լաւ մը լուա , աղէ , ալիւրին թաթիսէ և ձէթով կարմրոցուր : Հետը իւզով կարմրած փաթաթէս առուր :

157. — ԶՈՒԿԻ ԲԼԱՔԻ .— Զուկը լաւ մը մաքրելէ զերջ աղէ և կտոր կտոր ըրէ ու առապակին մէջ շարէ . վրան քիչ մը սխառոր և մաղտանոս լեցուր . քիչ մըն ալ ձէթ և շատ քիչ ջուր աւելցուր և փուռը քշէ . երբ մէկ կողմը եփի . (արդէն շատ չի կարմրիր) միւս կողմը դարձուր :

158. ՍԿՈՒՄՐՈՒԻ ՍԿԱՐՈՅ .— Սյս ձուկը լաւ մը մաքրէ . աղէ . սկարայի վրայ շարէ . լաւ մը եփէ . ամանի մը մէջ մէկ կարգ ձուկ մէկ կարգ սոխ ու մաղտանոս շարէ և վրան լեմոն քամէ :

ՀՎ



Անդրեաներ

Բ. ՄԱՍ

Բ. ՄԱՍ

ՃԳ. ՍՕՍԵՐ

159. ԿԵՌԱՍՍ .— Որդ չունեցող կեռասին կոթերը մաքրէ . վնասուածները հանէ , և մէկ օլսային 150 տրամ ջուր , 100 տրամ շաքար լեցուր և երեք քառորդ ժամ եփէ . եթէ յատուկ շիշեր ունիս , քիչ քիչ տաք ջուրի մէջ վարժեցուր և եփած սօսը տաք տաք մէջը լեցուր՝ ուշադրութիւն ընելով որ պարապ տեղ չմնայ , և անմիջապէս գոյէ : Եթէ շիշեր չունիս , թիթեղներէ փոքր կլոր տուփեր շինել տուր՝ մէկ կողմէն միայն փոքր ծակով մը , թիթեղագործ մը մօտդ պատրաստ ունեցիր որ լեցուածին պէս գոյէ . ամենափոքր ծակ մը պատճառ կ'ըլլայ որ տւրուի , բնածխային թթու կը գոյանայ և թիթեղը կուռի , մէջի պտուղները կը թթուին և կազողի նըման կը փրփրի : Ուստի շատ զգուշութիւնով գոյելու է :

Դարձեալ ատեն ատեն տուփերը քննելու է , եթէ ուսած կամ վազածներ կան , բանալով եփելու է : Շատ անգամ եփելով կրկին կը նորոգուի . բայց պահուելու չի գար : Բացուած տուփ մը շատ չի պահուիր , անմիջապէս գործածելու է :

160. ԾԻՐԱՆ (զայսի) .— Ծիրանը , որ երբեմն պայկուկ կամ միշմիշ ալ կը կոչուի . մաքուր ջուրով լուս , յետոյ կրկին ջուր լեցուր և մէջէն մէկիկ մէկիկ առնելով կուտերը զգուշութիւնով հանէ , և ամանի մը մէջ հաւա-

քէ : Յետոյ մէկ օխա ծիրանին (կուտառվը կշռուած) 150 տրամ ջուր և 150 տրամ շաքար աւելցուր . մէկ եփ մը հանէ և խկոյն շիշերու կամ տուփերու մէջ լեցուր թիւ 159 ին նման , նոյն զգուշութիւնները կատարելու խը-նամք առար :

161. ԲԱԼ (Քիշնէ) .— Լաւ և թարմ բալին կոթերը հանէ , մէկ օխային 100 տրամ ջուր և 150 տրամ շաքար աւելցուր և եփ ելածին պէս թիւ 159 ին մէջի ամեն զգուշութիւններով շիշերու կամ թիթեղեայ տուփերու մէջ լեցուր :

162. ՃԱՆ ԷՐԻԿԻ , ԴԵՂԻՆ , ԹԹՈՒ ՍՍԼՈՐ .— Եթէ կուտար դիւրին ելլող տեսակն է , հանէ , եթէ ոչ՝ կուտառվը 150 տրամ ջուր և 150 տրամ շաքար լեցուր և եփ ելածին պէս շիշերու և կամ թիթեղեայ տուփերու մէջ լեցուր ճիշտ թիւ 159 ին մէջ պատուիրուածին նման :

163. ԹԹՈՒ ՍՍԼՈՐ (չարալ երիկ) .— Կուտերը հա-նէ , օխային 150 տրամ ջուր և 150 տրամ շաքար լեցուր և եփ ելածին պէս թիւ 159 ին նման զոյէ :

164. ԱՆՈՑ ՍԵՒ ՍՍԼՈՐ .— Կուտառվ միասին , օ-խային 150 տրամ ջուր և 100 տրամ շաքար լեցուր և եփ ելածին պէս թիւ 159 ին նման զոյէ :

165. ԴԵՂԶ (շիֆթալլ) :— Կուտերը հանելէ վերջ մէկ օխային 150 տրամ ջուր և 100 տրամ շաքար լեցուր : Եթէ խակ ու կարծր է , 15 բողէ , եթէ հասուն է , 10 բողէ եփէ և շիշերու կամ թիթեղ տուփերու մէջ զոյէ թիւ 159 ին նման :

Եթէ եփելէ առաջ կեղեւները հանես , աւելի փո-փուկ և նուրբ կ'ըլլայ :

166. ԶՈՒՄ (զողալ) .— Շատ հասունները և տրոր-ուածները զատէ , և մնացեալին մէկ օխային 150 տրամ ջուր և 150 տրամ շաքար լեցուր . եփ ելածին պէս տու-փերու կամ շիշերու մէջ զոյէ ճիշդ թիւ 159 ին նման :

167. ԹԹՈՒԻ ԽՆՁՈՐ .— Կարէ . կեղեւը և միջուկը կուտերով և կարծր մասերով հանէ , մէկ օխային 150 տրամ ջուր և 150 տրամ շաքար լիցուր և եփ ելածին պէս շիշերու կամ թիթեղ տուփերու մէջ լիցուր՝ ճիշդ թիւ 159 ին նման :

Լաւագոյն սօսերէն մէկն է :

168. ՏԱՆՉ .— Միջակ հասած տանձին միջուկը հանէ , կոմմերը կարէ , կեղեւը թող մնայ , կարծր մասերը , եթէ կան , կարէ , մէկ օխային 50 էն 100 տրամ շաքար և 150 տրամ ջուր լիցուր . կէս ժամ եփելէ վերջ անմիջապէս գոցէ թիւ 159 ին նման : Ասոր մասնաւոր զգուշութիւն ընելու է , ինչպէս նաև կեռասին , քանզի այս երկուքը անհանգիստ մանուկներու կը նմանին , որ չեն ուզեր փակուիլ . միշտ թթուելու և աւրուելու ենթակայն , և ուստի միշտ փակուած տուփերը քննելու է :

169. ՍԵՐԿԵՒԻԻԼ (հայվա) .— Կտրատէ , միջուկը հանէ , մէկ օխային կէս օխա չուր , 150 տրամ շաքար գիր . և առնուազն մէկ ժամ եփէ , եթէ թարմ պիափ ուտես . երկու ժամ եփէ : Գոցելու ձեւը 159 ին նման է :

170. ՍԵՐԿԵՒԻԻԼԻ ՈՒՐԻՇ ԶԵՒ (զուրոսո) .— Սերկեւիլին վրայի մազերը սրբէ , մաքրէ , վնասուած տեղերը կարէ և լման լման տապակին մէջ գիր , մինչեւ կէսը ջուր լիցուր , մէկ օխային 150 տրամ շաքար աւելցուր և փուռը քչէ , շուտ շուտ դարձուր որ չայրի և մինչեւ սերկեւիլին լաւ մը կակուզնալը , մէկ ու կէս , երկու ժամ եփէ :

171. ԽՆՁՈՐԻ ԱՆՈՅԾ (Փոմրոսո) .— Խնձորը մաքուր մը լուտ , աւրուած կամ վնասուած տեղերը կարէ . և ամբողջ ամբողջ տապակին մէջ դիր , մինչեւ կէսը ջուր լիցուր և մէկ օխային 100 տրամ շաքար վրան ցանելով՝ փուռը քչէ : Շուտ շուտ դարձուր և պատասաքազով մը նայէ : Մինչեւ ամբողջովին կտկուզնալը՝ սպասուր :

172. ԶԱՄԻՉԻ ՍՈՍ. — Մէկ ու կէս օխա չամփչը լաւ մը մաքրէ, ցորենի մազին մէջ լեցուր և յատակին քսելով կոթերը թափէ: Տասը բողէ թրջոց դիր, լաւ մը լուա: Երկու օխա ջուրի մէջ 150 տրամ շաքար դիր, եփ եղելէ վերջ չամփչը լեցուր և մէկ քառորդ ժամ եփէ:

173. ԶՈՐ ԾԻՐԱՆԻ ՍՈՍ. — Մէկ ու կէս օխա Մալաթիոյ և կամ ուրիշ լնտիր ծիրանը մաքրէ, 10 բողէ մը թրջոց դիր, լաւ մը լուա, երկու օխա ջուրով և 150 տրամ շաքարով եփէ՝ վերինին նման:

174. ԶՈՐ ՍԱԼՈՐԻ ՍՈՍ. — Նոյնպէս մէկ ու կէս օխան լուա և երկու օխա ջուրով և 150 կամ, եթէ թթու է, 200 տրամ շաքարով եփէ՝ թիւ 171 ին նման:

ԺԴ. ՌԷԶԷԼՆԵՐ

Ամենէն առաջ պէտք է շաքարը մաքրել, ինչ որ պարզ է: Շաքարի ծանրութեան մէկ քառորդին չափ կամ քիչ աւելի ջուր լեցուր: Յետոյ խրաքանչիւր երկու լիտրին մէկ հաւկիթի ճերմկուց առնելով՝ լաւ մը զարկ, և վրան լեցուր: Լայն կոնքով մը կրակին վրայ զիր և երր եփել սկսի, խելոյն ատկի կրակը քաշէ և շատ կամաց թող եփի որ չթափի: Կամաց կամաց աղակիրը երեսը կը հաւաքուին, անմիջապէս ծակոտկէն շերեփով երեսէն ժողվէ և ամանի մը մէջ լեցուր: Շարունակէ եփնէլ մինչեւ որ երեսը ճերմակ փրփուը մը զոյանայ, զայն ալ հաւաքէ մինչեւ որ հատնի: Այդ ատեն խրաքանչիւր մէկ լիտրին սիսեռի չափ կիսրոնաղ (լեմոն առւզի) լեցուր և վար առ: Բոլոր բէչէներու գործածուող շաքարը նախապէս այս ձեւով պէտք է պատրաստել:

Շաքարի տեղ կրնայ զործածուիլ խաղողի և թութի
ոռուփը (պէքմէզ) : Այս պարագային տակ այս պատուզնե-
րուն զուա ջուրը , հիւթը եփելու է մինչեւ որ թանձրա-
նայ : Ծիրանէն (գայսը) և բալէն (ֆիշնէ) զատ միւսնե-
րուն սուփը աւելի լոյծ , նօսր ըլլալու է : Կարեւոր է
զիանալ թէ ո՞ր տաեն պատուզները լեցուելու են , քանզի
տակաւին ոռուփերը լման մը չթանձրացած՝ պատուզները լե-
ցընելու է , որ մինչեւ սուփին մէջի ջուրին չոզիանալը և
բուն աստիճանին համեմիը պատուզները ողէտք եղածին
չափ եփին :

175. ՄԱՄԼԻԹ .— Մէկ լիտր միայն կարմիր և դեղին
ստեպզին (հավուճ) առ , մաքուր մը լուա , կոթերը կարէ
և առաս ջուրով խաչէ մինչեւ որ լման մը կակուզնայ :
Յետոյ մեքենայով քաշէ : կամ մաղի մը մէջ լեցնելով մա-
զին յատակին քսելով մաղէ անցուր , և մէկ լիտրին երեք
ու կէս կամ չորս օխա շաքար՝ շատ քիչ ջուրով լուծելով
վրան լեցուր և եփէ մինչեւ որ թանձրանայ ու ջուրը
քաշուի : Վրան քիչ մը տառչին կամ վարդիջուր լեցուր :
Շատ համեղ և խնայողական րէյէլ մը կ'ունենաս :

176. ՃԱԿՆԴԵՂԻ ՏՈՒ (բանջար) .— Այս ալ ճիշդ
վերինին նման կ'ըլլայ , միայն տառը մէջ նարինջի կեղեւը
տաշելով լեցնելու է կամ մէկ լիտրին հինգ հատ կիսրոնի
(լեմոն) ջուր . քամելու է :

Ուշագրութիւն բնելու է որ տակին մազոս տեսակ-
ները չգտնուին :

177. ԶՄԵՐՈՒԿԻ ԲԷԶէլ .— Զմերուկ կերած տ-
տենդ միշտ մաս մը կեղեւին վրայ կը թողուս , որ առ-
հասարակ փուժը կը վասնուի : Ճիշդ այդ կտորները լու-
րէէլի մը նիւթը կրնան տալ : Այդ կտորները քիչ մը
կարմիրով հանէ և անոնց վրայէն ձմերուկի դուրսի կար-
ծըր կեղեւը կրցածիդ չափ բարակ կեղուէ : Մնացածը չա-
փաւոր մը մանրէ , ամանի մը մէջ լեցուր և կիրի յասուկ

ջուրով (լէզի քիրէճ) ծածկէ և թող մէկ ժամ սպառէ : Յետոյ ջուրէն/ հանէ , և վերը բացատրուած ձեւով մաքրը ւած շաքարէն խրաքանչիր օխացին մէկ օխա լիցուր և եփէ : Երրոր փրփրի սկսի , նոյէ թէ կաորները մինչեւ կեդրոնը եփած են : Եթէ չեն եփած , քիչ մըն ալ ջուր լիցուր և շաբաւնակէ եփելը մինչեւ որ լաւ մը գոյնը զառնայ և փրփրի սկսի : Անմիջապէս վար առ :

